№ 97 ԿԻՐԱԿԻ ՄԱՅԻՍԻ 7

1906

ԵՐԵՍՈՒՆՉՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԿԻՐԱԿԻ ՄԱՅԻՍԻ 7 № 97

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբլի. առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ». Կամ Tiflis, Rédaction «Mschak».

Տէլէֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.

Տէլէֆոն № 253.

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄՇԱԿ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

ՆԵՐԿԱՅ 1906 ԹՒԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

(34-ՐԴ ՏԱՐԻ)

ԲԱԺԱՆՈՐԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 ռուբլի է, տաս և մէկ ամսվանը նոյնպէս 10 ր., տասն ամսվանը՝ 9 ր., ինն ամսվանը՝ 8 ր., 8 ամսվանը՝ 7 ր., եօթ և վեց ամսվանը՝ 6 ր., հինգ ամսվանը՝ 5 ր., չորս ամսվանը՝ 4 ր., երեք ամսվանը՝ 3 ր., երկու ամսվանը՝ 2 ր. և մի ամսվանը՝ 1 ռուբլի։ Ապրիլի 1-ից մինչև 1 յուլիսի 2 ռուբլի։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԲԱԺԱՆՈՐԱԳՐՈՒԹԻՒՆ. Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 դօլլար. Եւրօպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 ռուբլի։

«Մշակին» գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ. (Բաղարնայա և Բարօնսկայա փողոցների անկիւն)։ Ստորագրվել կարելի է միայն ամսի 1-ից։

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելիս, պէտք է գիտել հետեւեալ հասցէով. ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ" իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

Յայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ապրիլի 20-ին թոյլատրութիւն ստանալով՝ բաց ենք անում բաժանորդագրութիւն

„ՀԱՅ ՄՈՒԶԱ"

Գրական, բանաստեղծական-գեղարուեստական պատկերազարդ շաբաթաթերթի, հետեւեալ բաժիններով՝ 1. Բանաստեղծութիւններ. 2. Արձակ գեղարուեստական բանաստեղծութիւններ. 3. Թատերական գրուածքներ. 4. Ժողովրդական բանահիւսութիւններ. 5. Նմուշներ և հատուածներ լաւագոյն արտադրութիւններից. 6. Կենսագրականներ գրողների, բանաստեղծների, երաժշտագէտների և այլ գեղարուեստագէտների մասին. 7. Քննադատութիւններ. 8. Երաժշտութիւն և երգ. 9. Պօսթ-արկղ և 10. Յայտարարութիւններ։

Տարեկան բաժանորդագինը Ռուսաստանում՝ 5 ր., արտասահմանում՝ 6 ր., հատի տակ 10 կ.։

«Հայ Մուզան» գործակալներ կունենայ քաղաքներում և գաւառներում։ Տասը բաժանորդ գտնողը թերթը ձրի կըստանայ։ Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզուներով, մասնչելի գներով։

Դէպի այն բոլոր խմբագրութիւնները, որոնք մեր յայտարարութիւնը ձրի կը տպագրեն և մերի հետ իրանց թերթերի փոխանակութիւնը կը յարգեն, «Հայ Մուզան» ցոյց կը տայ փոխադարձ նմանօրինակ վարմունք։

«Հայ Մուզան» կը հրատարակվի լուրջ հիմքերի վրա և միշտ ձեռնպահ կը մնայ ճեղ կուսակցական պոլեմիկայից։

Հրաւիրում ենք հայ բանաստեղծներին և հեղինակներին աշխատակցել։ Խնդրում ենք հայ նկարիչներին և ձեռնհաս խմբագրութիւններին չը պակաս աջակցութիւն ցոյց տալ այս նոր գործին մատչելի միջոցներով՝ թէ պատկերներով, կլիշէներով և թէ կարևոր խորհուրդներով։ Թերթը լոյս է տեսնելու Թիֆլիս, Հերմէս տպարանում։

Ժամանակաւոր հասցէն՝ Шулаверы, редакція «Гай Муза».

5—5 (առ.) Խմբագիր-Հրատարակիչ՝ Գրիգոր Բալասանեան

ԵՂԲԱՅՐՔ

ՄԵԼԻՔ-ՄԱՐՈՒԹԵԱՆՑՆԵՐԻ

Առևտրական խանութը սոյն ապրիլի 1-ից ՓՈԽԱԴՐՎԱԾ է Սիօնի փողոցից Ա. Մանթաշեանի նոր շինութիւնը, որ գտնվում է հին ծածկած բազարանային կից։

Մուտքը բազարանայից եւ Մանթաշեանի շարֆերից (Манташ. ряды) №№ 30, 31, 32, 33, 40 և 41.

(կ. շ. ու.) առ. 6—10

ԺՈՂՈՎԱՐԱՆԻ ԴԱՀԼԻՃ

Կիրակի, մայիսի 7-ին

Ե. Ա. ՎԵՐՄԻՇԵԱՆԸ

կը կարդայ

ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆ

ռուսերէն լեզուով՝

«Կուսակցութիւնների նշանակութիւնը քաղաքական կեանքում»։

Սկիզբն է 12 ժամին

Տոմսակները (առաջին 3 կարգերը 1 ռուբլի, իսկ միւս տեղերի գները 20 կոպէկ) ծախվում են ժողովարանի շէնքի մօտ։

(շ. կ.) 2—2

Քիմիկո-բակտերիոլոգիական ինստիտուտ

Բժ. Ֆ. Մ. ԲԼԻՄԵՆՏԱԼԻ

Մոսկվայում

ՇԻՃՈՒԿՆԵՐ (сыворотки) սկարլատինայի (Մոզէլի մեթոդով), դիֆտերիտի, ռեվմատիզմի դէմ (Menzer'y-ի մեթոդով) դիֆտերիտոյնայա, պուէրպերալնայա, ստրեպտոկոկկովայա (պոլիվատենտնայա) ստաֆիլոկոկկովայա և բաղդոպայա (Մերիուա մեթոդով) միշտ գտնվում են

պրոֆիզոր

Ա. Ս. ԿԼԵԲԱՆՍԿՈՒ

ՔԻՄԻԿՈ-ԲԱԿՏԵՐԻՈԼՈԳԻԱԿԱՆ ԿԵԲԻՆԵՏՈՒՄ

Ընդունվում են մէջն, մաղձի հետազօտութիւններ. իշխ. Զարենցովի արձանի մօտ, հեռախօս № 389։

(կ. առ.) 2—10

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մաքառումների ապարէզներ. Վերջին տեղեկութիւններ. Մամուլ. Պետական Խորհրդը. Հողային հարցը կդնեմի վերջին համագումարում Տեղեկատու Զանգեզուրի. Մուսուլման Պառլամենտների մէջ. Բոյկոտ թէ անտարբերութիւն. Դատախօսութիւն, Ալէքսանդրոպոլի երկու պառլամենտների ընտրութիւնը. Այստեղ և այնտեղ. Մաքրեցէք աստղերը. Նամակ խմբագրութեան. Ներքին լուրեր. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. — Նամակ Պարսկաստանից.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. Պետական Դումա. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

ՄԱՔԱՌՈՒՄՆԵՐԻ ԱՊՈՒԱՐԷԶՆԵՐ

I

Ցաւալի էր տեսնել, թէ ինչպէս հրապարակի վրա աշխատող հասարակական գործողները չէին կարողանում ըմբռնել թէ ինչ նշանակութիւն ունի Պետական Դուման Ռուսաստանի համար և ամենամեծ եռանդով աշխատում էին հեռու պահել ժողովուրդը ընտրութիւններին մասնակցելուց։

Այդ պալը, հիպնոսացնելով մի քանի քաղաքական համախմբումների, զարտուղի ճանապարհի վրա դրեց նրանց։

Շատ շաբաթի համարպարզ էր սպալը։ Բայց այնտեղ, ուր մարդիկ փակվելով որոշ կախարդական շրջանի մէջ, անկարող են քննադատաբար վերաբերվել դէպի երեւոյթները և անընդունակ են ինքնաքննութեան, այնտեղ մի անգամ արված սխալը ոչ թէ չէ ուղղվում, այլ նա աւելի ու աւելի ստուարանում է, խանգում և նոր սխալների ուղի դառնում։

II

Հիմնական մոլորութեան պատճառն այն էր, որ մարդիկ անկարող էին գնահատել պառլամենտական ռէժիմի էութիւնը, իբրև գործունէութեան և մաքառման զօրաւոր միջոցներից մէկը։

Պետական Դուման, ի հարկէ, դեռ ազատ պառլամենտ չէր, դեռ նա չէր տալիս այն լիակատար ներկայացուցչութիւնը, որը անհրաժեշտ է ժողովրդապետութեան համար, այո, այդ այդպէս էր. բայց Պետական Դումա գնացողների մեծագոյն մասը ամենեին չէր էլ կարծում թէ նա կատարեալ պառլամենտի մէջ է մտնում, այլ նա գնում էր գիտակցօրէն շահագործելու այն բոլոր միջոցները, որ տալիս է նրան նոյն այժմեան Պետական Դուման իր վերջնական նպատակների համար և հարթելու ճանապարհը աւելի փառաւոր պառլամենտական կեանքի համար։

III

Պետական Դուման չափազանց թերի մի պառլամենտ է։

Դա գաղտնիք չէ ոչ ոքի համար։

Կառավարութիւնը իր ձեռքին է պահում զինուորական ամբողջ կազմը և դեռ ֆիզիքական մեծ ոյժ ունի իր ձեռքին՝ ճնշելու և ցրվելու պառլամենտը, գոնէ ժամանակաւորապէս։

Այդ էլ գաղտնիք չէ ոչ ոքի համար։

Բայց այդ հանգամանքներից ամենեին չէ բղխում անմիջական այն եզրակացութիւնը, թէ պէտք է խուսափել այդ պառլամենտից և դեռ կռիւը չը սլսած քաշվել մաքառման ասպարէզից։

Ահա սխալը այդտեղ էր։

Պետական Դուման կատարելութիւն չէր և չէ. բայց նա գործելու ասպարէզներից մէկն էր և այն էլ շատ հեղինակաւոր և մեծ ասպարէզ։

Եւ իրականութեան փաստերը եկան հաստատելու, որ մենք, երբ յորդորում էինք գնալ Դուման, սխալված չէինք։

IV

Մթթէ այն պատճառով, որ մամուլի կատարեալ ազատութիւն չը կայ, չենք օգտվում նոյն իսկ եղած մամուլից մեր մաքառումները առաջ տանելու համար։

Մթթէ այն պատճառով, որ խօսքի ազատութիւն չը կայ, մենք մեզ պարտադման և լռութեան ենք մատնում. մթթէ մենք չենք օգտվում ամեն մի դէպքից, ամեն մի միջոցից մեր խօսքը առաջ տանելու, մեր մտքերը տարածելու նոյն իսկ այն նեղ սահմաններում, որ մեզ տրված է։

Եւ ինչու մենք չը պէտք է օգտվենք Պետական Դումայից, իբրև մի կարևոր միջոցից թէ մեր բողոքները յայտնելու և թէ մեր դրական առաջարկները ու ծրագիրները առաջ մղելու համար։

Անկասկած, պէտք է օգտվենք։ Եւ Ռուսաստանը իր մեծագոյն մասով վճռեց օգտվել նրանից։

Թէ բողոք և թէ դրական առաջարկներ և ծրագիրներ գրված են պառլամենտական սեղանի վրա։

V

Մեզ կարող են առարկել երկու բան։

Առաջինը՝ թէ կառավարութիւնը կարող է դէն շպրտել պառլամենտը։

Այո, կարող է։ Բայց դա ոչինչ չէ սըշանակում։ Դա կառավարութեան կողմից արված մի մարտահրաւէր կը լինի ժողովրդին։

Եւ ժողովուրդը կը գտնէ միջոցներ մաքառելու և իր դատը պաշտպանելու։

Երկրորդ՝ թէ կարելի էր աւելի մեծ հետեւանքների հասնել և աւելի արմատական բարեփոխութիւններ ձեռք բերել, եթէ ամբողջ Ռուսաստանը մերժէր ներկայ կիսատ-պռատ պառլամենտը և պահանջէր կատարելագոյնը։

Այո, այդպէս կարելի էր մտածել, եթէ ժողովրդի կողմից ստացած լինէինք մի այդպիսի վստահութիւն։

Բայց դա չը կար, իսկ առանձին քաղաքական խմբերը դեռ ուժեղ կապերով չէին կապված ժողովրդի հետ։

VI

Ժողովուրդը չէր տալիս այդ վստահութիւնը։

Եւ այդ բանից օգտվեց կառավարութիւնը իր ոյժերի մի մասը վերականգնելու համար։

Նա շահագործեց իր օգտին հոգեբանական մոմենտը և գլուխ բարձրացրեց։

Բայց նա գիտէ, որ ժողովրդական ազատութեան ուղին այլ ևս չէ կարող խաչաս ընկնել և ժողովրդի սրտերում վառված հուրը այլ ևս չէ կարող հանգչել, ուստի նա ինքը զիջումների պատրաստականութեամբ սակարկութիւններ է սկսել ժողովրդի հետ։

Կռիւը և մաքառումը կարող են աւելի ու պակաս զարգանալ, բորբոքվել ու մարել։

Եւ Պետական Դուման կուլ ու մաքառման ամենախոշոր ասպարէզներից մէկն է։

Ա. Բալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Բաղաքային դումայի որոշման համաձայն, երէկ, մայիսի 6-ին, քաղաքային վարչութիւնը Պետական Դումայի նախագահ Մուրոմցևին ուղարկեց մի հեռագիր հետեւեալ բովանդակութեամբ. «Թիֆլիսի քաղաքային դուման միաձայն որոշեց ողջունել Պետական Դուման և յայտնել խորին ուրախութիւն ռուսական առաջին պառլամենտի բացման առիթով, որի վրա մեծ սեռնչանքներ և յոյսեր են դնում կայսրութեան տանջված ազգաբնակութիւնը առհասարակ և Կովկասինը մասնաւորապէս։ Կովկասեան ծայրերկրսից անկախ պատճառներով մեր ներկայացուցիչները զրկված են հնարաւորութիւնից բարձրացնել իրանց ձայնը և բանալ պառլամենտին Կովկասի բոլոր բաց վէրքերը և խոցերը։ Բաղաքային դուման կը ցանկանար հաւատալ, որ մեր բոլոր նախկին սարսափները շուտով պատմութեան շրջանը կը մտնեն, շնորհիւ ռուսական պառլամենտի ամբողջ կազմի միաբան ջանքերի, որոնք արտայայտվեցին նրա գործունէութեան առաջին քայլերից արդէն և այլ ևս երբէք չեն կրկնվի կայսրութեան ամենահեռաւոր անկիւններում անգամ։ Զերմապէս ողջունելով պառլամենտի բոլոր բարի սկզբնաւորութիւնները, քաղաքային դուման միացնում է իր ձայնը ռուս հասարակութեան լաւագոյն մասի ցանկութիւններին, այն է, ընդհանուր ամնիստիա քաղաքական յանցանքների շնորհիւ բոլոր վնասվածների համար և դադարեցնել մահվան պատժի գործադրութիւնը, որ կազմում է սարսափելի անարօրինակ այն պայծառ ապագայի արշալոյսին, որը, կասկած չը կայ, շուտով կը ծագէ Ռուսաստանի համար»։

—

Գանձակ, 5 մայիսի

Մի քանի օր առաջ տեղական հայ և թուրք հասարակութեան ներկայացուցիչները ներկայանալով գեներալ Ալիխանովին, խնդրեցին, որ առաջարկէ երկու կողմի հասարակութեանը, նահանգապետի մօտ խորհրդակցող խաղաղարար մամանաժողովի անդամների ընտրութեան համար կարգադրութիւն անել։ Խօսակցութիւններից ներկայացուցիչները այն եզրակացութեան են եկել, որ նահանգապետը մի առանձին կարևորութիւն չէ տուել այդ յանձնաժողովին—բայց ներկայացուցիչների խնդիրքին զիջանելով, իրաւունք է տուել ընտրութիւններ կատարել։ Ամսիս 3-ին Գանձակի հայ հասարակութեան ներկայացուցիչները, ժողովվելով փոխանորդարան, միաձայն որոշմամբ խաղաղարար մամանաժողովի անդամների և անձնափոխանորդների ընտրութիւն եղաւ։ Ընտրվեցին հետեւեալ անձինք. Սամսոն Յարութիւնեան, Իսահակ Խօջաեան, Սամուէլ Բալաղեան, Անդրէաս Սերեբրակեան, Գարեգին Համաֆիւռեան, Պաւել Աւաքեան, բժ. Ս. Փաթալեան, բժ. Ս. Շահպարոնեան։ Առաջին չորս անձինք, իբրև մամանաժողովի անդամներ, երկրորդ 4 անձինք՝ իբրև անձնափոխանորդներ։ Ընտրված են նաև գաւառապետն ու պրիստաւ Մօտինը, որոնց մասին արդէն գրված եմ ձեզ։

Ա. Սահակեան

—

Խանքենդ-աւան, մայիսի 2-ին

Մայիսի 1-ին Շուշուց ժամանեց այստեղ մի խաղաղարար յանձնաժողով, բաղկացած 5—6 անդամից, որոնք էին գաւառապետի աւագ օգնականը, քաղաքապետ Գ. Բալանթարեան, մանաւոր հաւատարմատար Մինասբէկեան, բժիշկ Մելամանդարով, և այլն։ Դրանց կողմից վաղօրօք, ոստիկանութեան միջոցով, Խանքենդի էին հրաւիրված Վարանդայի առաջին պրիստաւութեան ենթարկվող և ամբողջ Խաչէն գաւառի հայերն ու թուրքերը։ Հայերը խուռն բազմութեամբ, անխտիր բոլոր գիւղերից, ներկայ էին։ Զը կար ոչ մի թուրք։ Ժողով կայացաւ տեղական ռուսաց դատարանում։ Յանձնաժողովը առաջարկեց հայերին բաւական համարել այն անմիտ կոտորածը, որ սարքում էին իրար (հայ և թուրք) դէմ, իրանց գործին ու աշխատանքին կենալ և այլն և այլն։ Այսպիսի առաջարկութիւններ, յորդորներ։ քարոզներ, խրատներ և վերջապէս ըսպ«ոնալիքներ հայերի դէմ մէկ երկու էին, այնքան շատ են եղել, որ անհնարին է թւել, թէ քանի՞ անգամ է եղած։

Հայերի կողմից պատասխանում է Խրամորթ գիւղացի Իսահակ Աւանէսեանցը ժողովրդապէս հետեւեալը. «Այս չեմ իմանում քանի՞ երրորդ հաշտութիւնն է, որ քարոզվում է մեզ։ Անցեալ տարվայ օգոստոսի Շուշու ընդհարումից յետոյ, բոլոր Խաչէնի հայերին տարան Ադրամ, հաշտութիւն քարոզեցին, երդվեցրին աւետարանի, խաչի և զուրանի վրա, բայց մեր հարևան թուրքերը դեռ երեք օր չանցած յարձակվեցին մեր գիւղի վրա և կոտորեցին իմ եղբայրներին և ապա մնացին անպատիժ։ Այն ըսպանոնալիքները որ կարդացվում են, գիւղեր ոչնչացնել, բանտարկութիւններ, զինաթափութիւն, միայն հայերի դէմ են կատարվել։ Թուրքերի կատարած բոլոր յանցագործութիւնները մինչև այսօր մնացել են և մնում են անպատիժ, որ և սատակ խրախուսում է նրանց։ Զարկը հիմնովին ոչնչացնելու համար պէտք է որոնել արմատը և կտրել այդ արմատը, բայց այժմեան ժամանակում այս սկզբունքը չը կայ, խաղաղութեան համար միջոցներ են ձեռք առնվում անհիմն կերպով—հայերին միայն ճնշելով, իսկ միւս կողմին խրախուսելով։ Պ. գաւառապետ, ձեր իրաւունքն ինձ տուէք և ես երկու օրում կը խաղաղացնեմ երկիրը, այնպէս որ ձեր քէֆն էլ կը գայ։

Բայց այժմ դուք այն չէք անում, ինչ որ հարկաւոր է. ծառը հիմնովին չորացնելու համար պէտք է բանալ նրա արմատները և կտրել արմատները, բայց դուք արմատները կտրելու փոխարէն կտրում էք ճիւղերը, ճիւղերը կտրելուց յետոյ. նորից բանում են նոր ճիւղեր, որ հարկաւորվում է նորից կտրել և այսպէս տևում է երկար ժամանակ, ապարդիւն և ցնասակար մի անդամալոյծ։ Քանի որ ճիւղերը կտրելու փոխարէն, հարկաւոր է միանգամից կտրել արմատը և ահա կը տեսնէք, որ ծառը ինքն իրան կը չորանայ։ Բայց այդ արմատը շուտ չի կտրվի։ Մեզ կանչել էք և հաշտութիւն էք քարոզում. բայց մեզ ուզում հետ էք ուզում հաշտեցնել, ուր են թուրքերը, ինչու չէք հրաւիրել այստեղ. եթէ մենք գնում ենք Ադրամ՝ նրանց հետ հաշտվելու, չէ՞ որ նրանք էլ այստեղ պէտք է գան հաշտվելու. բայց չեն եկել, որ նշանակում է չեն ցանկանում հաշտվել։ Բայց մենք այդ բանից իսկի երկիւղ չունենք, թողէք, կը կռւենք և պատով կը յաղթենք։ Հրամայում էք հաշտվել, կը հաշտվենք, բայց այդ ձեականութիւնը մինչև երբ պէտք է տևի, երբ պէտք է զեռական խաղաղութիւն և հաշտութիւն լինի...։ Մենք հաշտ ենք, մեր հարևան թուրքերի դէմ ոչինչ նախանձ չունենք, մեր վերջնական պայմանն այս է հաշտութեան ուխտը հաստատուն պահելու համար. եթէ հայերի սահմաններում իրօք սպանվեց մի թուրք, մենք թուրքերին տանք երկու հայ, թող կախաղան բարձրացնեն, իսկ թուրքերի սահմաններում եթէ մի հայ սպանվեց, թող թուրքերը մեզ երկու թուրք տան՝ կախաղան բարձրացնելու, որանով ոչ ոք չի համարձակվի խախտել խաղաղութեան ուխտը»։

Գիւղացու այս խօսքերը ազդում են յանձնաժողովի անդամների վրա, մում են իրար երեսի նայելիս, գաւառապետը վեր է ցցում իր ուսերը։

Ո՞ՉՎում է նորից թուրքերին և հայերին կանչել կամ Ասկարան և կամ Խոջալու կայարանը՝ խաղաղութիւն քարոզելու։

Բայց մինչև երբ պէտք է խաղաղութիւն քարոզվի։ Խաղաղութիւնը քարոզելիս շեշտվում է, որ խաղաղութեան դաշինքը քանչող կողմը պէտք է ծանր պատիժներ կրէ. այս խօսքերը հրապարակ խօսելուց յետոյ, իրականութեան մէջ ոչինչ չէ կատարվել, տուժվողը, զրկվողը, հարստահարվողը շարունակ արդար հայն է եղել։

Յանձնաժողովը դարձաւ Շուշի։

Յանձնաժողովի գնալուց յետոյ, 2 ժամ անցած, Քառասնի հանդերում լսվում էին համազարկի ձայներ։ Մարդիկ դուրս եկան բարձրավանդակները դիտելու՝ թէ ինչ է կատարվում այնտեղ և ահ, ահ, որ Մալիբէկլուից զինված թուրքեր յարձակվել են Քառասնի նախերի վրա և քշել-տարել։ Այդ բանը հաստատվեց։ Իրանք քառասնեցիք եկան և յայտնեցին պրիստաւին, միայն տարված նախերի թիւը չիմացվեց, որովհետև շատ անասուններ փախել էին դաշտան կողմեր, երեկոյեան պէտք է հաշէին, թէ որ մարդուց որքան է տարված։

Մի կողմից հաշտութիւն է քարոզվում, միւս կողմից աւարառութիւններ կատարվում. արի դուրս թափիր, թէ այս տեսակ քաջը երբ պէտք է վախճան ստանայ։

Պրիստաւը 25 կօզակներով գնաց Մալիբէկլու, բայց դեռ չէ վերադարձել, որ իմանանք, թէ նա ինչ գոյներով է ներկայացնում թուրքերի այդ արարքը։ Առայժմ այսքանս է յայտնի, որ թուրքերը իրանց այդ յանցագործութիւնը ծածկելու համար բողոք են ուղարկել զօրքի գնդապետին (ինչու՞ ոչ պրիստաւին) թէ քառասնեցի հայերը բռնել և գերի են տարել իրանց երեք աւարածներին։

Բռնչոները ապրիլի 25-ից մինչև մայիսի 8-ը պէտք է բարձրացած լինեն սարերը, բայց դեռ նրանք չը կան։ Բանակ կանգնած կօզակները արդէն կանգնեցրած են որոշ տեղերում, նրանց պահպանելու, հովանաւորելու, որ լաւ սար բարձրանան։ Լուր կայ, որ Արաքսի, Կուրի ափերի, Մուղանի դաշտի բոլոր թաչուններ խմբված են Ադրամի ներքևներում, իսկ 1500 զինված քրդեր էլ կազմ ու պատրաստ կանգնած են Զանգեզուրի գաւառում։ Սրանց մասին մեզ հասած տեղեկութիւնները առ այժմ վերապահում ենք հաղորդելու, միայն ապագան մթագնած է...։ Ադրամեցիք շարունակում են ռուսներին ցորեն չը ծախել՝ պատճառաբանելով, որ այդ հայերի համար էք տանում։

***

—

Խանքենդ-աւան, 3 մայիսի

Խանքենդի Թուրք-հայկական ընդհարումից յետոյ, այստեղի թուրքերը փախան և պատսպարվեցին տեղիս զօրքերի կազարմաներում, ապա թնդանօթներով, զօրքերով տեղափոխվեցին Ադրամ և մում էին այնտեղ, բայց որովհետև արդէն սկսված են տաք եղանակները և նրանք անսովոր են տաք արևին, տեղափոխվել են Մալիբէկլու։ Նրանք Մալիբէկլուում տեղական տանուտէր Դադաշի առաջնորդութեամբ կազմել են մի աւազակային խումբ և շարունակ գողութեամբ ու մարդասպանութեամբ են պարապում։ Նրանք երբեմն յարձակվում են Շուշու գիւղի ձմերանոց Փիրամաքու վրա, երբեմն Խանին-բաղի անցրդների, և այժմ էլ յարձակվել են Քառասնի գիւղի վրա և տարել նրանց ասունները։ Այս աւազակային խումբը երբեմն-երբեմն գալիս է Խանքենդի և իջնում է տեղիս զօրքի գնդապետի տանը։ Նրանք մեծ գովասանքով են խօսում գնդապետի մարդասիրութեան մասին։

Հայերը երբ մի անգամ գանգատվել են այս գնդապետին այդ աւազակների մասին, գնդապետը պատասխանում է. «Նրանց տները քանդել էք, իսկ նրանք էլ մնացել անգործ, քաղցած, ապա եթէ զողութիւն չանեն, ինչով պէտք է ապրեն»։ Լաւ մարդասիրութիւն է։

Այդ աւազակային խումբը սրանք են կազմում. տանուտէր Մալիբէկլուի հասարակութեան՝ Դադաշ Ալակեար օղլի, եռասուներ Մաշադ Սամադ, քուրդ Սալիմ և քուրդ Բաղալ, Մամմադ-Բաղը Վալի օղլի, Թաղի Քերբալայ Մահարրամ օղլի, Միրզալի Բասուլ օղլի, Ուսուբ Սադըխ օղլի, Հասան Շերին օղլի, Բաղիր և Այուբ Քերբալայ Աբուլ օղլի, Թեմիր և Մամմադ Ալլահկուլի օղլի (մանաւանդ այս Ալլահկուլին), Սէյլեն-կուլի Հաջի Մեհտի օղլի, Բաշիդ և Կասում Քերբալայ Հէյդար օղլի, Սալահ և Վալահ Թանգրիվերդի օղլի, Նօվրուզ Քեարիմ օղլի, Թալբ Ասադ օղլի, Մամմադ Հասան օղլի և Շահվալադ Շերին օղլի։ Եթէ այս աւազակային կատարելագործված խումբը չը ցրվի Մալիբէկլուից, անխաղաղ վիճակում են լինելու թէ Խանքենդի և թէ Մալիբէկլուի շրջակայ գիւղերը։ Այժմս թէ Վարանդայում և թէ Խաչէնում թուրքական գիւղեր չը կան, սրանց բնակիչները փախած են Ադրամի դաշտավայրը, մնացած է միայն Մալիբէկլուն և այսքան մնասներ է պատճառում շրջակայ հայերին։ Հարկաւոր է, եթէ խաղաղութիւն են ցանկանում, ճնշել մալիբէկլուեցիներին և ցրել այն աւազակային խումբը, որոնց անունները արձանագրել ենք այստեղ. բոլոր չարիքի, խռովութիւնների պատճառը դրանք են։

***

—

Ընթերցողները տեղեկութիւն ունեն Ղազախի գաւառի Կրզան գիւղի չորս բնակիչների սպանութեան մասին։

Սպանութիւնը կատարել էին Բօղանդալի թուրք գիւղի «քաջերը»։

Այժմ նրանք իրանց ամեղ են հրապարակում. մայիսի 3-ին Բօղանդալու թուրք գիւղից մի քանի մարդ եկել էին Թիֆլիս խնդիրք ներկայացնելու Փոխարքային, որ իրանք, այսինքն բօղանդալուեցիները մեղաւոր չեն, և չը պէտք է տուժեն սպանված կըրզենցի հայերի համար, որովհետև այդ սպանողները դաշտ են եղել. հետևապէս իրանք անմեղ տեղն են քանդվում կառավարութեան կողմից նշանակված կօզակների ձեռքով։

Միւս կողմից էլ նրանք յայտնում են, որ այդ սպանողը Սօսանի թշնամին է եղել։

Սակ ՝ն նրանց յայտարարութիւնները հիմնովին սխալ են։ Երբ մենք՝ կըրզենցիներս գնացինք ապրիլի 24-ին Բօղանդալու (սպանութիւնը 25-ին է եղել), այդ 4 մարդկանց, որոնց մենք բոլորս անձամբ ճանաչում ենք, իրանց գիւղումն ենք տեսել, որովհետև դաշտը գիւղի մէջ չէ լինում, այլ փախստական և թէ միայն այդ գիւղը ամբողջովին դաշտներից չէ բաղկացած։

Եւ թէ դրանք դաշտներ էին, ապա հարկ չը կար կառավարութիւնից վախենալու, քանի որ կարելի էր ասել, որ այդ մարդիկ դաշտ են եղել ու այդպէս արդ սրանալ։

Եթէ այդ բանը բոլոր բօղանդալուեցիները չը գիտէին, ապա ինչու՞ հէնց այդ գիւղը բոլորը երեխաներով, կանանցով միասին անցան Կուր գետի միւս ափը ասելով, որ «կօզակներ կը գան, վախենում ենք»։ Միթէ ուղիղ չէ ասած թէ՝ «արդը իրան ահից գոռում է»։

Իսկ գալով այն առարկութեան թէ մէկը եղել է Սօսանի թշնամին, ենթադրենք որ մէկը թշնամի է եղել. ապա նրա հետ միւս 3 բօղանդալուեցիքը ինչ էին շինում, նրանք ում էին թշնամի. թող մենակ վերջապէս Սօսանին սպանէին, քանի որ նրա թշնամին են եղել. ապա ինչ մեղք ունէր, կամ ում էր նրա թշնամին, որ խեղճ 25 տարեկան երիտասարդին վեր գցեցին ու ոչխարի նման մորթեցին։ Եւ վերջապէս ինչ մեղք ունէին Բէգվերդի Երեմեանը և Ասլան Ղազարեանը։

Թող յայտնի լինի կառավարութեանը և հասարակութեանը, որ այդ դաւադրութիւնը լարված էր մեր դէմ ամբողջ գիւղի կողմից և ոչ թէ երևակայական դաշտների գործ ըստ մեր հարևան թուրքերի։ Արդարանալու համար դեռ ուրիշ շատ անարդար և ստոր ստախօսութիւնների կը դիմեն թուրքերը, ուստի հաւատալ երբէք չէ կարելի։

Մայիլեան

ՄԱՄՈՒԼ

«Страна» լրագիրը «Քաղաքական տեսություն» վերնագրով մի յօդուածի մէջ հետևեալն է ասում.

«Այս օրերս կայացած ռուս. ս. դ. բան. կուսակցութեան համագումարը յետին թւով դատապարտեց ընտրութիւնների բօյկոտի տակտիկան, որը հանդիսացաւ և հակաժողովրդական և ՀՅ-ական իրանց բանաւորների շահերի համար։ Բայց խոստովանելով մի սխալը, սոցիալ-դեմօկրատները կամենում են մի նոր, աւելի խոշոր և ճակատագրական սխալ գործել, եթէ ոչ բանաւորների, գոնէ կուսակցութեան համար։ Ապրիլի 26-ին սկսել է լոյս տեսնել սոց. դեմ. ամենօրեայ թերթին, որ կառաջի կոչւում է բացել Դումայի դէմ։ Թերթիկը դիմում է նաև այնպիսի բիսկոտ ձևերի, որոնք չեն արդարանում նոյն իսկ կուսակցական փանատիկոսութեամբ։

«Ահա, օրինակ, ինչպէս է «ողջունում» նոր լրագիրը Դումայի բացման օրը. «Ապրիլի 27-ին կառավարութիւնը և բուրժուական ազատում են իրանց յաղթութիւնը յեղափոխական պրօլետարիատի և գիւղացիութեան վրա։ Յեղափոխութեան այժերը սպառված են—մտածում է կառավարութիւնը։ Յեղափոխութեան այժերը սպառված են— մտածում են ազատականները և յարմարապես զետեղվում են Դումայում։ Պէտք է յիշել, որ դա խօսվում է այն Դումայի մասին, որի մէջ կան 200 գիւղացիներ, մի քանի տասնեակ սոցիալիստներ բոլոր գոյների, մի շարք պրօֆէսօրներ, փաստաբաններ, լժիշկներ, և ուր առևտրական-արդիւնաբերական դասակարգը գրեթէ ներկայացուցիչներ չունէ։ Բայց ընդունենք, որ այդ Դուման, որը, ի հարկէ, մտադիր չէ կռիվ մանաւորը սեփականութեան սկզբունքի դէմ, սոց.-դեմօկրատների տեսակէտից բուրժուազական է։ Ճիշտ է, արդեօք, որ այդ բուրժուազական Դուման կառավարութեան հետ միասին մտադիր է ոչնչել յաղթանակը բանաւորների և գիւղացիների վրա։ Ոչ, ճշմարիտ չէ։ Ս. Դ. պէտք է իմանան, որ Դումայի այժմեան կազմը ամենից քիչ ընդունակ է հաշտարար ուժեր կազմել հին ըէժիմի հետ և դաւանելով գիւղացիների և բանւորների շահերին։ Նրանք պարտաւոր են իմանալ, որ եթէ աշխատէլը, առանց կռիւների, իրագործել սահմ.-ռամկավ. ծրագիրը, դա կը լինէր ամենամեծ յեղափոխականութիւնը աշխարհիս մէջ։ Նրանք, վերջապէս, պարտաւոր են իմանալ, թէ ինչ ծանր փորձանք կրելու համար են գնում Դուման, նրանք, որոնց վերաբերում են, իբր թէ նրանք ձգտում են «կոնֆիսքարդ» կերպով տեղ բռնել։

Amicus Marx, sed maqis amico veritas։ Հօ չէ կարելի յեղաշրջել իրականութիւնը և հանդիս կուսակցական ֆանատիկոսութեան։ Սոց.-դեմօկրատները կը հաշուէին Դումայի հետ, եթէ նա զումարված լինէր քառանդամ քանակով։ Ընդարձակ այդ սխեմէը նախատես են, ի հարկէ, ոչ միայն ս. դ., այլ բոլոր, ընդհանրապէս, դեմօկրատական կուսակցութիւնները, բայց անկասկած, այդ սխեմով ևս կընդարձակէին Դումայի համար նրանք, որոնք այժմ ընտրվել են։ Այժմ Դուման պէտք ունի միայն ամբողջ ժողովրդի միահամուռ աջակցութեան»։

ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ
(Հեռագրական զրոյցակցութիւն)

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 5 մայիսի։ Պետական Խորհուրդն ընդունեց հետևեալ Ամենաողորմած ուղերձը Թագաւորին. «Ձերդ Կայսերական Մեծութիւն, Ամենաողորմած Թագաւոր։ Ձեր Կայսերական Մեծութեան կոմքով վերակազմած Պետական Խորհուրդը մատուցանում է Ձեզ, Թագաւոր, իր հաւատարիմ հպատակութեան շնորհակալութեան արտայայտութիւնը Ձեր ողորմած ողջոյնի խօսքի և ժողովրդական ներկայացուցչութիւնը իրագործելու համար, որով մտաւ Ռուսաստանը իրաւական պետութիւնների շարքը։ Այդ ողջոյնի մէջ Ձերդ Մեծութեան հաճելի էր Ծոյլ բարձրութիւնից նախացուցանել նոր օրէնսդրական հաստատութիւններին այն ճանապարհը, որին նրանք պէտք է հետևեն։ Ձեր արքայական կամքի համեմատ ձեռք զարկելով այժմ իրագործելու Ձեր Մեծութեան նախագծած խնդիրները, Պետական Խորհուրդը իր հոգածութեան առարկայ է դարձնում բոլոր ժողովրդի բարօրութիւնը և ամէն ջանքեր գործ կը դնէ ծառայելու Թանգագին հայրենիքին՝ հաստատ հաւատ ունենալով դէպի վերանորոգված Ռուսաստանի պայծառ ապագան։ Անկեղծ ձգտմամբ փոխադարձապէս ազդվելու Պետական Դումայի հետ, Պետական Խորհուրդը յոյս է տածում, որ նոր օրէնսդրական հիմնարկութիւնները, ոգևորված հայրենիքի սիրով, կը միացնեն իրանց ընդհանուր ջանքերը պետութեան մէջ կարգ և ներքին խաղաղութեան հաստատելու, լայն, ընդհանուր ուսուցման սկզբունքի վրա հիմնված հաւասարութիւն տարածելու ժողովրդի մէջ, նրա իրաւունքները և շնորհված ազատութիւնը ամուր կերպով պաշտպանելու, երկրի արդիւնաբերական այժերը բազմակողմանի կերպով զարգացնելու համար և բարձրացնելու ազգաբնակութեան բոլոր խաւերի, մանաւանդ բազմաթիւ գիւղացիութեան բարեկեցութիւնը։ Պետական Խորհրդի խորին համոզմամբ ինքնավարութեան սկզբունքների զարգացումը, նոյնպէս նրանց տարածումը այն տեղերում, որոնք մինչև այժմ զրկված են եղել դրանից, նոյնպէս արդարացի յարգանք առ մեր ընդարձակ հայրենիքի ցեղերի և ժողովուրդների առանձնայատկութիւնները, կը նպաստէ, ստեղծելու մի դիտակից միացեալ, բարեկարգ և լուսաւորեալ պետութիւն և փառս նրա Թագակիր պարագլուխների և երջանկութեան Ռուսաց Կայսրութեան բոլոր ազատ քաղաքացիների։ Մեծ է և անջնջելի մարդկութեան պատմութեան մէջ Ձեր մեծահոգի նախաձեռնութեամբ սկսված Ռուսաստանի վերածնման և իրաւունքի վրա հիմնված ազատութեան և կարգի ճանապարհի վրա նրա կանգնելու օրը։ Դարերի ընթացքում Ռուսաց պետութեան կեանքի մէջ նշանաւոր դէպքերը տպաւորվում էին ժողովրդի յիշողութեան մէջ արքայական շնորհով գալով բանաւորկամների և յանցանքների մէջ ընկածները։ Խորին զայրոյթով վերաբերվելով դէպի մինչև այժմ ևս չընդհատվող չարաշարութիւնները, որոնք կատարվում են քաղաքական ազատութեամբ ոգևորվելու պատճառով, Պետական Խորհուրդը ուշադրութեան առնելով մեր անցկացրած ժամանակի չափազանց լրջութիւնը, վստահանում է արքայական Ձեր Կայսերական Մեծութեան մեծահոգի հայեցողութեանը այն անձանց վիճակը, որոնք բուռն ձգտում ունենալով շուտափոյթ հասնել ցանկացած ազատութեան կամ կարգը պաշտպանելու համար կուռ մէջ խախտել են օրէնքով դրված սահմանները, բայց որոնք չեն դիտել ուրիշի կեանքին կամ գոյքին, նոյնպէս չեն վարակել այդ յանցանքներով անպարզացած և թոյլ մարդկանց։ Եւ թող երկարացնէ Տէր Աստուածը Ձեր թանգագին օրերը շատ տարիներ և հնարէ Ձեր Մեծութեանը մեծ միջոցներ՝ տեսնելու սիրեցեալ Ռուսաստանը զօրեղ և բարօր դրութեան մէջ»։

ՀՈՂԱՅԻՆ ՀԱՐՑԸ ԿԱԴԵՏՆԵՐԻ ԵՐԲՈՐԴ ՀԱՄԳՈՒՄԱՐՈՒՄ

Ագրարային հարցը բոլոր քաղաքական կուսակցութիւնների համար ամենափափուկ և ամենավիճելի խնդիրն է համարվում, որի վերաբերեալ չեն կարողանում որոշ և լիակատար համաձայնութեան գալ նոյն իսկ մի և նոյն կուսակցութեան պատկանող անձնաւորութիւնները։ Սակայն հէնց այդ փափուկ խնդիրն էր, որ վերջերս քննվում էր ժողովրդային ազատութեան կուսակցութեան երրորդ համագումարում և որը անպէտ վիճաբանութիւններ առաջացրեց։

Ամիսներից առաջ շարունակ խօսվում էր, որ Պետական Դումայում առաջնակարգ քննվելիք օրէնքներից մէկը հողային հարցը կանոնաւորելու խնդիրները պիտի լինեն, ուստի հէնց այդ բանը ի նկատի ունենալով, ժողովրդային ազատութեան կուսակցութիւնը, իրանց համագումարից առաջ մի յատուկ յանձնախումբ էր ընտրել, մանրագէտ և գործին հմուտ անձնաւորութիւններից կազմված, որին և յանձնված էր ագրարային օրէնքի մի նախագիծ մշակել։ Այդ նախագիծը յետոյ քննվել էր կուսակցութեան ուելի ընդարձակ շրջանակներում և ապա միայն ներկայացվեց համագումարին։ Եւ չը նայելով այդ բոլորին, ինչպէս ասացինք, դարձեալ այդ խնդիրը մեծ վիճաբանութիւններ առաջացրեց և անգամ ժամանակ խլեց ժողովից։

Այնուամենայնիւ ժողովականները, ի նկատի առնելով, որ Պետական Դումայի բացումը շատ մօտ է և չէ կարելի այդ խնդիրը կիսակատար թողնել և առանց հողային հարցին վերաբերեալ օրէնքի մի որոշ նախագիծ ունենալու, Դումա գնալ, սնապին մեծամտութեամբ որոշեցին ընդունել յանձնախմբի մշակածը, որ և բերում ենք ասորեւ։

Աշխատանք ժողովրդին հող տալու համար ագրարային օրէնքի նախագիծը ի նկատի ունի սահմանադրաբար լեռ գնել հետևեալ հողերը. պետական, ուրիշին, կարիճնատային, այսինքն՝ կայսերական տոմսին պատկանող, եկեղեցապատկան, նոյնպէս և զանազան հիմնարկութիւններին և մասնաւոր անձանց պատկանող հողերը։ Մասնաւոր սեփականատիրական հողերից սահմանադրաբար յետ չը պէտք է գնել միայն հետևեալ կարգերին պատկանողները. ա) այն փոքր հողաբաժինները, որոնք մշակվում են տերոջ սեփական աշխատանքով, բ) այն կալուածները կամ կալուածամասերը, որոնք հողային գործերը կարգադրող հիմնարկութեան կողմից կը համարվեն, իրանց բացառիկ և օրէնսկիզի մշակութեամբ, իբրև հասարակութեան համար կարևոր նշանակութիւն ունեցող կալուածներ, գ) այն հողերը, որոնց վրա գործարանական կամ գիւղատնտեսական - տեխնիկական ձեռնարկութիւններ են հիմված այն չափով, որ միասնական տեխնիկապես անհրաժեշտ են ձեռնարկութեանը (այն հողերը, որոնց վրա շէնքեր, պահեստներ և այլն են հիմված)։ Ինչ վերաբերում է շաքարի և օղի համար եղած պլանացիոնների հողերին, նրանց էլ արտօնաւոր պայմաններ ու ժամանակ պէտք է տրվի մի տեղ անելու համար։ Ագարակների, այգիների, բանջարանոցների ու պարտէզների և այլն հողերը յետ չեն գնվիլ, եթէ նրանք երկու մեծ հողերի մէջ ընկած ՀՅ-ական կարը չեն ներկայացնի։

Այդ բոլոր յետ գնված հողերը պէտք է կազմեն պետական հողային ֆոնդ, որից առանձին կտորներով պէտք է տրվեն վարձով, երկար ժամանակով օգտվելու համար, առանց ուրիշին տալու կամ վաճառելու իրաւունքով, և վարձն էլ պէտք է որոշվի հողի արդիւնաւորութեան ու որոշվելիք հողային տուրքի համաձայն։

Ենթադրվում է այդ եղանակով հողաբաժիններ տալ այն գիւղացիներին, որոնք կամ շատ քիչ հող ունեն և կամ բոլորովին հող չունեն, և որոնք հողագործութեամբ են զբաղվում կամ իրանց սեփական, կամ պետական և կամ վարձով վերցրած հողաբաժինների վրա։ Նոյն եղանակով հողաբաժիններ պէտք է տրվեն և գիւղատնտեսական բանւորներին։ Գիւղացուն ազատով զարգացնելու հողաբաժնի չափս ընդունվում է սկզբունքով այնպիսի մի կոր հող, որը որոշ տեղի համար բաւական է գիւղացու բոլոր միջակ կարիքները հոգալու համար, այն է՝ ուտելիքը, հագուստը և պետական հարկերը։

Այս է կազմելու մշակած ագրարային օրէնքի նախագծի բովանդակութիւնը, որ մտածում են նրանք ներկայ Դումայում անցկացնել իբրև օրէնք։ Ինչպէս տեսնում է ընթերցողը, դա մի շատ զգուշոտ հողային ըէֆորմ է, որը իր էութեամբ չափազանց մօտ է նոյնիսկ սոցիալիստական կուսակցութիւնների ագրարային պահանջներին, և հէնց այդ տեսակէտից, եթէ ներկայ Դուման ժամանակից առաջ ընդհարում չունենայ կառավարութեան հետ և այս վերջինը շուտով չը ցրվի նրան, ուեթէ հողային հարցը բարեյաջող կերպով քննութեան առարկայ դառնայ ներկայ Դումայում, վստահութեամբ կարելի է ասել, որ այդ խնդրի վերաբերեալ բոլոր ձախակողմեան կուսակցութիւնները կը միանան կանոնդներին։ Նամանաւանդ սիրով կը միանան գիւղացի պատգամաւորները, որոնք Դումայում մի շատ պատկառելի թիւ են կազմում։

Ճիշտ է, թէև այդ նախագծի մէջ, ինչպէս համագումարի անդամներից շատերն էլ նկատեցին, հողերի «ազգային» կամ «համայնական» զարձնելու սկզբունքը պարզ և կարուկ կերպով արտայայտված չէ, այլ ասված է, որ յետ գնված հողերը պէտք է կազմեն պետական հողային ֆոնդ, բայց և այնպէս իր էութեամբ դա շատ մեծ քայլ է դեպի սոցիալիստական հողային ֆոնդը, որ ամբողջ հողերը մօտիկ ապագայում համայնական, սոցիալական դարձնելու համար։ Այդ բանը իբրև զարանափա կարող է ծառայել նախագծի այն կէտը, որ ասում է, թէ յետ գնված հողերը պէտք է տալ մշակող գիւղացիներին, ոչ թէ իբրև անհատական սեփականութիւն, այլ վարձով և առանց ուրիշին տալու կամ վաճառելու իրաւունքով։

Եթէ ներկայ Դումային աշխողվի ագրարային այդ ծրագիրը օրէնք դարձնել, այն ժամանակ մենք ականատես կը լինենք մի այնպիսի վիթխարի ու չը տեսնված բէֆորմի, որին ամենաառաջադէմ երկրներն անգամ կարող են նախանձել։

Սակայն, կանխաւ չը ոգևորվենք և սպասենք։

Ռ.

ՏԵՂԵԿԱՏՈՒ ՁԱՆԳԵԶՈՒՐԻ

Ապրիլի 23-ին Զանգեզուրում խաղաղութիւն հաստատելու նպատակով, ապրիլի 15-ին գաւառապետ պ. Միխկէվիչ Օրբելից մեկնում է իր հետ պ. պ. Առաքել Եօլիանցին, Նիկոլայ-բէկ Մելիք-Հիսէինեանցին և քանհնիզ կօզակ ու անցնում է դէպի Դափան։ Դափանից էլ հաւաքվում է հայ և թուրք ժողովրդից ստուար բազմութիւն, իրանց ներկայացուցիչներով, նախօրօք «Սիմնիք» պղնձէ գործարանը և այդպիսով, ամսիս 17-ին IV և V գաւառամասի երկու ազգութիւնն էլ, հայ և թուրք, բաղդ են ունենում հաշտութեան անունով ի մի գումարվելու։ Նախ խօսել է պ. գաւառապետը խաղաղութիւն հաստատելու համար իրան շնորհած նոր իրաւունքի մասին, և ապացուցել թէ հայ և թուրք ժողովրդի անխախտ համերաշխութիւնը որպիսի գեղեցիկ օրեր և ապագայ կը բերէ այդ երկու զբաղված ազգութիւնների համար, մանաւանդ այժմ, իրերի այսօրվան խառն դրութեան ժամանակ։ Ինչպէս երևում է, շատերի պէս պ. Գաւառապետն էլ, աւելորդ է համարում կողմերի անձանց միջամտութիւնը երկու ազգերի հաշտութեան գործում, որոնք երբեմն աւելի խոշոր բարդութիւնների են լուծ տեղիք տալիս, այլ հրաւիրում է երկու կողմից պրատանց զղջալ և վատաօրէն ձեռք մեկնել անքակտելի հաշտութեան։ Գաւառապետը անաչառ վերաբերմունք ունի, ամենքին նայում էր քրիստոնեայի աչքով։

Կարդացվից և 9 կէտերից բաղկացած հաշտութեան պայմանը, ուր մի առ մի մատնացոյց են արված այսուհետև խաղաղութիւն վերջվող և յուզում առաջացնող մարդու, գիւղի կամ հասարակութեան վրա դրված խիստ պատասխանատուութիւնը և պատիժը։ Պէտք է կազմակերպվի նաև նոր կօմխասա, հայերի և թուրքերի հացրած ՀՅ-ական ՀՅ-ական բարը փոխադարձաբար զարձնելու համար։

Այլ և որպէս զի IV և V գաւառամասերում (Դափանում) այսուհետև նոր յարձակումներ և ընդհարման առիթներ չը կրկնվին, կը կազմվի շուտով 15 հոգուց (երկու ազգութիւնից) բաղկացած մի թուղթի-ձիւռը կամ մի ուրեագնիկի հետ, որոնք թէՀՅուբէկ Զմանչիրի հսկողութեամբ, կը շրջագայեն ամբողջ Դափանը և թէ մի տեղ կը պատահի որևէ զրգռման նիւ յուզման նշան, իսկոյն և եթ կաճապարեն խաղաղութիւնը հանգստացնելու։ Դրանց համար որոշված են ամսավարձեր։ Թուղթի խմբին է վերապահված և թարգեամաններին խաղաղ կերպով եկայող ատելը, այնպէս որ նրանք յանձն պէտք է ուղեկցեն բոլորովին մանանանդ հայ գիւղերի մօտով անցնելիս։

Դափանում, թարգեամները երեք ճանապարհով են սար գնում.

1) Եալ-հօլի (անցնում են Շուռուխի լեռնաշղթայով)։

2) Գիլման ցոյ.

3) Ձակատկէ գիւղի առաջով, Եալ-հօլի է անցնում։

Որոշված է նաև, որ միմիայն 3 անդամ պէտք է սար գնան, այսինքն, գնացողները պէտք է բաժանվեն երեք մասերի։ Եւ իրաւունքը չունի ճանապարհին ուշանալու, այլ տները, օյմաղները անընդհատ իրար պէտք է յաջորդեն։

Գ. գաւառապետը խնդրեց, որ երկու կողմից էլ ատորագրութիւն ուղղեն ներկայանան, որոնց ասած ատորագրութիւնը ժողովրդը հաւատալով, վերջ կը դնեն նոր դէպքեր առաջացնող գործողութիւններին։

Եւ ատորագրութիւն ուզը, որևէ վնասի, արված գեղծման և 9 կէտերում պարունակվող կանոնների հակառակ, ամեն մի պատահած անկարգութեան համար, պատասխանատու է վարչութեան առաջ։

Ասում են, որ Իլդրիմ-բէկը իր կաշուց վախենալով մի քանի ուազակների ձերբակալել է տուել, որից յետոյ վատաօրէն իր զրանիկներից մէկի հետևողութեամբ միացել է պ. գաւառապետի խմբին։ Նաև մեծ քանակութեամբ խնդիրներ են ներկայացած պ. գաւառապետին, որով մի գիւղի թուրքեր գանգատ են հարևան թուրք գիւղացիներից և նրանցից խլված ալան-թալանի ցուցակը շատ ՀՅ-ական էր բովանդակում։ օրինակ Չիկիլ-մուեցիք գանգատուոր էին մատնացուցին դրանց, որ հայ-թուրքական կռիվների ժամանակ մազմազաքցիները զրաբել և զօռով տարել են 500 հատ ոսն դրան թարը, 100 հատ իւքակներ (փայտաշէն թեթև ցորնամբարներ), 100 զոյգ կամներ և այլն... Գ. գաւառապետն էլ ասում է, թէ թուրքերի բերանից չը լսեցի մի գանգատ դէպի հայերն ուղղած, այլ միմիանց էին ուղղում նրանք իրանց գանգատները և յանախ իրար օգնքից բռնում, թէ սրան բռներ, աւազակը, գողը, մարդասպանը սա է։

Եւ այդ ոչ թէ մի, կամ երկու գիւղում, այլ ամեն տեղ։

Ապրիլի 23-ին երեկոյեան դէմ Խնձորեսկ եկան պ. գաւառապետը, հայ ներկայացուցիչները և Իլդրիմ-բէկը։

Ժողովուրդը խնդրել էր ոչ թէ նոր գաւառապետի առաջին անգամ գալը շնորհաւորելու կամ տեսնելու, այլ իսկ Իլդրիմ-բէկին դիտելու, Իլդրիմին, որ հարիւրաւոր գիւղերում նատել, զինել է, պաշարել է մի շարք հայ գիւղեր և այժմ անմեղ գառան պէս հետևում է պ. գաւառապետի խմբին, իբրև խաղապատեր ներկայացուցիչ։

Մի ժամ հանգստանալուց յետոյ՝ դէպի Գօբիս ուղևորվեցին։ Ոմանք ասում էին, թէ Իլդրիմին այլ ևս բաց չեն թողնի։ Սակայն, ազուէսը թակով էլ կարող է խաղալ։

Սազանդարեան

ՄՈՒՍՈՒԼՄԱՆ ՊԱՏԳԱՄԱՒՈՐՆԵՐԻ ՄԷՋ

—«Մեր լօզունգն է. կրօնի ազատութիւն և իրաւունքի հաւասարութիւն»,—պատասխանեցին մուսուլման պատգամաւորները մեր այն հարցին, թէ ինչն են իրանց համար աւելի կարևոր։

—Մուսուլմանները կրօնասէր են չափից դուրս, մինչդեռ, չը նայելով կրօնի ազատութիւն յայտարարվելուն, մեզ չեն թոյլատրում նոյն իսկ Պետերբուրգում մէչէթ կառուցանելու։ Մեզ համար ասում են, որ մենք մեծ արտօնութիւններ ենք վայելում։ Դա ուղիղ չէ։ Այդ բանը կարող է ասել միայն նա, ով ծանօթ է մուսուլմանական հարցի հետ ընդհանրապէս։ Ինչպիսի սրտցաւի վիճակում է գտնվում մեր կրթական գործը։ Նոյն իսկ տարրական դպրոցներ չը կան։ Մինչդեռ, երբ մենք պահանջում ենք, որ մեր երկրում նշանակեն մուսուլման կրօնի պատկանող պաշտօնեաներ, մեզ նախ և առաջ ասում են, որ նրանք անպատասխան են դրա համար իրանց կրթութեամբ։ Եւ մեր պահանջը Պետական Դումայում կրթութեան վերաբերմամբ կառաջադրվի կարելուն չափ ընդարձակ կերպով, մենք կը պահանջենք հիմնելու և տարրական դպրոցներ, և բարձրագոյն մասնագիտական դպրոցներ։ Նրանք պէտք է լինեն պետական, և բոլոր ուարկանները պէտք է դասաւանդվեն մեր մայրենի լեզուով։

Մեզ կրկնում են արտօնութիւնների մասին... Կարելի է միթէ նրանց մասին խօսել, երբ մեր հոգեւորականութիւնը, որ մեծ ժողովրդականութիւն է վայելում, դատի է ենթարկվում, իբրև մի հասարակ գիւղացի, համայնական դատարանով։

Մենք անհրաժեշտ ենք համարում, որ հոգեւորականների համար սահմանվի ուրիշ երաշխաւորութիւն։

Իրաւունքների հաւասարութիւնը մեզ համար անհրաժեշտ է, թէկուզ սոսկ այն տեսակէտից, որ նա միայն կարող է ոչնչացնել այն, իսկապէս անբացատրելի անջրպէտը, որը գոյութիւն ունի մեր և քրիստոնեաների մէջ։

Մեր ազգային ինքնասրութիւնը խայթվում է ամեն մի քայլափոխում։ Մինչդեռ մենք տալիս ենք կառավարութեանը այն բոլորը, ինչ որ ուզեցին են տալիս։ Մենք նրանց հետ հաւասարապէս արիւն ենք թափել Մանջուրիայում։ Սակայն այնպիսի իրաւունքներ, ինչպիսին վայելում են նրանք, մենք չունենք։

Բայց թուրքերի վիճակը համեմատարար տանելի է, քան միւս մուսուլմաններինը։ Վերցրէք կիրգիզներին։ Նրանց դէմամբ մինչև այժմ պատում են իրանց նախնական վիճակում։ Այն ժամանակ, երբ կիրգիզները իրանք խնդրում էին մեզ տալ իրանց ուսուցիչներ տարրական դպրոցների համար, կառավարութիւնը արգելք եղաւ այդ բանին։ Կիրգիզների հարցը մենք առանձին նիւթ կը դարձնենք Պետական Դումայում։ Նրանց, ինչպէս և մեզ համար, անհրաժեշտ է տեղական ինքնավարութիւն։ Նա կը բարձրացնէ երկրի կուլտուրական մակերեսոյթը։ Կառավարութիւնը չը պէտք է երկիւղ կրէ այդ ինքնավարութիւնից։ Մուսուլմանները երբէք չեն գնացել կառավարութեան հակառակ, և նա պէտք է շտապէ մեզ բաւարարութիւն տալ։

—Իսկ ինչ դրութեան մէջ է գտնվում բաշկիրների հարցը։

—Բաշկիրների հարցը մեր ամենագլխաւոր, ցաւագար տեղն է։ Նրանց վերաբերմամբ կը լինեն մեր ամենագլխաւոր պահանջները։ Կառավարութիւնը ոչ օրի այնպէս չէ շահագործել ինչպէս նրանց։ Դեռ ևս եկատերինա Լ-ի ժամանակ հողը էին շնորհել նրանց։ Յաջորդ օրէնքները խլեցին նորից։ Երբ բաշկիրները ընդդիմութիւն ցոյց տուին և ներկայացրին նուիրագական հրամարակը, այն ժամանակ ուզղակի առանց որևէ պատճառի չը վերադարձրինեւ։ այդ հողազրկութեան հետևանքները այժմ ակներև են։ Սարատովի սոմ ու կարիքն է իշխում բաշկիրների բոլոր գիւղերում։ Ով հող ունի, նա ձի չունի, ով ձի ունի նա հող չունի։ Գիւղերում թաղաւորում են սատանօլօգները։ Կաշառակերութիւնը չափից դուրս զարգացել է։ Մի որևէ ամսագրի տիրած փողոցում նա տնօրինում է բաղը և գրնում հարցը կարուկ կերպով—արձանագրութիւն կամ... հաւ։ Կատարված քննութիւնները ոչ մի հետևանք չեն ունենում։

Զերէվանկու գեկուցումը միայն այն արեց, որ կիրգիզներին զարձրեց կապարներ, որը ի հարկէ ճիշտ չէ, չէ եղել, և, պէտք է յուսալ, որ չի էլ լինի։

Այսպէս այլևս անկարելի է շարունակել։ Մենք եկել ենք ոչ թէ խնդրելու, այլ պահանջելու Բաւական է որքան մենք սոսրացանք, սատանալով փոխարէնը լոկ խոստումներ և խոստումներ։ 25 միլիոն մուսուլմանները մեզ դատաւոր են հարևան թուրք գիւղացիներից և նրանց մեր պահանջները կը սատանք։ Մեր ծրագիրները լիովին իրագործելի են, նրանք մօտաւորապէս համապատասխանում են կադէտների ծրագրին։ Եւ եթէ կառավարութիւնը չի կատարել մեր պահանջները, այն ժամանակ նա գործ կունենայ արդէն այդ միլիոնաւորների հետ, և մեզը մերը չի լինել, երբ լոկ «ոչ» մերժողական խօսքը ոտքի կը հանէ նրանց սարսափելի գործեր կատարելու համար։ (Страна)

ԲՕՅԿՕՏ ԹԷ ԱՆՏԱՐԲԵՐՈՒԹԻՒՆ

—

Մեզնում—Կովկասում էլ արդէն սկսվել են ընտրութիւնները Պետական Դումայի համար, և առաջներից ստացված տեղեկութիւնները գալիս են հաստատելու բոլոր մեր այն վախ ու կասկածները, որ մենք արտայայտել էինք «Մշակի» էջերում, սրանից ճիշտ երկու ամիս առաջ։ Մենք այն ժամանակ այն միտքն էինք յայտնել, որ շնորհիւ մեր հասարակական գործիչների ու զանազան քաղաքական կուսակցութիւնների սխալ և յոռի գործունէութեան, մեր ժողովուրդը բոլորովին զուրկ է մնացել քաղաքական գիտակցութիւնից, որ նա, ապրելով Ռուսաստանի սահմանների մէջ, բոլորովին չէ հետաքրքրվում պետական ընդհանուր գործերով, չէ կապվում ու չէ ապրում պետութեան ընդհանուր կեանքով, այլ ընդհակառակը նա միշտ ձգտում է մի տեսակ կղզեանալ և իրան շարունակ հեռու պահել ընդհանուր պետական խնդիրներից։ «Եւ այդ ժողովուրդը,—ասել էինք մենք այն ժամանակ,—վաղը կամ միւս օրը պէտք է հրաւիրվի Պետական Դումայի համար ընտրութիւններ կատարելու։ Ինչ քաղաքական դատանդամ նա պէտք է մտանէ քուէարկելու»։

Այդ մեր ասած «վաղը կամ միւս օրը» այժմ արդէն այսօր է դառել և ընտրութիւնները սկսվել են, իսկ գաւառներից ստացված տեղեկութիւնները մեզ յայտնում են, որ մեր ժողովուրդը—հայ ժողովուրդը, ոչ միայն առանց սեէ քաղաքական դատանդամ է մտնում քուէարկելու, այլ և նա բան մեծի մասին սկի չէ էլ մտանում այդ առարկելու։ Նա բոլորովին չէ էլ հետաքրքրվում ընտրութիւններով և ամենայն անտարբերութեամբ չէ մասնակցում նրանց, կարծես թէ Պետական Դուման հայ ժողովրդին սկի չէ էլ վերաբերվում։

Դատաներից եկած նոյն տեղեկութիւնները բոլորովին տարբեր են պատմում մեր դրացի միւս ժողովուրդների մասին. ոչ միայն վրացիները, որոնք մեզանից շատ աւելի քաղաքական հասունութիւն ձեռք բերեցին վերջին 4—5 տարվայ ընթացքում, այլ նոյն իսկ թուրքերն էլ շատ աւելի մեծ հետաքրքրութիւն են ցոյց տալիս դէպի ընտրութիւնները և աւելի մեծ թիւով ու եռանդով են մասնակցում նրանց, քան հայերը։ Սա մի շատ տարօրինակ և զառապարեալ պակասութիւն է, որը չէ կարելի ոչ մի կերպ արդարացնել։

Եւ յիրաւի, ինչով բացատրել հայ ժողովրդի այդ անտարբերութիւնը։ Մի՞թէ հայ-թուրքական ընդհարումներով կամ նրա գլխին եկած պատահարներով։ Բայց չէ՞ որ նոյն ընդհարումներով բռնված են և թուրքերը, չէ՞ որ նոյն պատահարներից ազատ չեն մնացել և վրացիները, և նոյն թուրքերը։

Բացատրել արդեօք այդ անտարբերութիւնը «բօյկոտով»։ Բայց դա բօյկոտ չէ և նա երբէք անտարբերութեամբ, ընտրութիւններով չը հետաքրքրվելու ձևով չէ արտայայտվում, ընդհակառակը՝ յաճախ բօյկոտ անողը հէնց նրա համար է այդ անում, որ նա չափազանց շատ է հետաքրքրված ընտրութիւնների գործով և նա ցանկանում ու ձգտում է, որ ընտրութիւնները կատարվեն իր ուզած ձևով։ Բայց զանց՝ ներկայումս այդ բօյկոտի մասին ինչ խօսք կարող է լինել։ Բօյկոտ հրատարակում էին այն ժամանակ, երբ կարծվում էր, թէ կառավարութեան թափած ջանքերի շնորհիւ կարող է միայն խուլ-ազգանուն Դումա ստացվել, որին, իբրև օրենսդիր մարմին, ճանաչելը ու նրա մէջ մասնակցելը ուղղակի ժողովրդի շահերին դատաճանել կը նշանակէր։ Բայց չէ՞ որ այդպէս չեղաւ, չէ՞ որ կառավարութիւնը ընտրութիւններում բացարձակապէս պարտութիւն կրեց։ Չէ՞ որ հիմա բօյկոտի առաջին գրգիռները ու ամենամեծ պաշտպանները անդամ այլ ևս խոստովանվում են իրանց սխալը և շատ ափսոսում են, որ ընտրութիւններին չէն մասնակցել։ Ուրեմն, այս բոլորից յետոյ Կովկասում և այն էլ միմիայն հայերի կողմից բօյկոտ անելը միթէ կուշտ ճաշից յետոյ խարդալ ուտելու չի՞ նմանի։

Սակայն, ոչ. ընտրութիւններին հայերի չը մասնակցելը բոլորովին բօյկոտի հետևանք չէ։ Դա պարզապէս յանցաւոր անտարբերութիւն է, որը հետևանք է հայ ժողովրդի քաղաքական անհասունութեան, նրա կղզիացած դրութեան և ընդհանուր պետութիւնից կտրված, ու մի տեսակ անջատ կեանքով ապրելուն։ Եւ այդ յանցանքի ամենամեծ բաժինը, ի հարկ է, ընկնում է մեր այն հասարակական, քաղաքական ու «ազգային» գործիչների վրա, որոնք, ինչպէս երկու ամիս առաջ արդէն ասել ենք, տարիների ընթացքում շարունակ քարոզում էին ժողովրդին, թէ նա կովկասի կամ հարևանների մասին երբէք չը պիտի մտածէ, նա այդ երկրում ոչ մի անելիք չունի, թէ նրա հայրենիքը, ամբողջ յոյսն ու ապագան միայն Մասիսի շուրջն է...

Ռ.—Ազատ

ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆ

—

Ուրբաթ, մայիսի 5-ին, երեկոյեան ժամը 8½-ին, Թիֆլիսի ժողովարանի դահլիճում, կայացաւ պ. Հ. Առաքելեանի դասախօսութիւնը՝ I Քաղաքական կուսակցութիւնները եւ ռամկավարների կուսակցութիւնը. անհրաժեշտութիւնը հայ ժողովրդի համար յարել այդ կուսակցութիւնն։ II Աւսօնօմիայի, Ֆեդերացիայի եւ համերկրային լայն ինքնավարութեան խնդիրները։

Դասախօսը բացատրելով, որ այժմ, երբ Պետական Դուման արդէն սկսել է իր գործունէութիւնը, որի վերջնական նպատակն է տապալել աւտօկրատիան, հին ըէժիմը և ստեղծել նոր կեանք, նոր ըէժիմ նոր հիմունքների վրա, բոլոր առաջադէմ այժերը, բոլոր ձախակողմեան կուսակցութիւնները պէտք է աշակցեն Դումային, ցոյց տուեց, որ Դուման բօյկոտի ենթարկելու դաղափարը, իբրև մի անհեթեթ և քաղաքական տգիտութեան արգիւնք պէտք է ջնջվի, մանաւանդ որ սոցիալիստական կուսակցութիւնները, օրինակ, սոցիալ-դեմօկրատները իրանք ճանաչեցին, որ բօյկոտը տակտիքական խոշոր սխալ էր։ Ապացոյց տուեց, որ բօյկոտի գաղափարը մեզանում այժմ շարունակում է պաշտպանել նաև Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը, բայց հայ ժողովուրդը սկսել է ազէն հասկանալ Պետական Դումայի ընտրութիւններին մասնակցելու անհրաժեշտութիւնը։ Իբրև ապացոյց, որ Դաշնակցութիւնը ներկայ դէպքում չէը զեկավարվում որ և է սկզբունքով, դասախօսը մատնացոյց արեց այն փաստի վրա, որ նա, Դաշնակցութիւնը, բօյկոտ յայտարարելով Դումայի դէմ, որովհետև Դումայի ընտրութիւնները չեն կատարվում քառանդամ, այլ երկանդամ ֆօրմուլայով, այնուամենայնիւ հնարաւոր համարեց մասնակցել ներսիսեան զրոցի հոգաբարձական ընտրութեան, որ

որ մինչև ընարութեան օրը ոչ մի մասաւոր շարժում, ոչ մի նախընտրական պայքար, ձեռներեցութեան ոգի կամ սոսկ հետաքրքրութիւն չարտայայտվեց մեր լիբերալ կեանքում՝ թէ համապատասխան թեկնածուներ առաջ մղելու և թէ ժողովրդին հասկացնելու ներկայ քաղաքական բօսպի կենսական կարևորութիւնը։ Այս դատապարտելի անտարբերութիւնը, որի ամօթաբեր կողմը ծանրանում է գլխաւորապես մեր գիտակցող տարրի վրա, բացատրվում է նախ նրանով, որ մեր մէջ թոյլ է գնա հասարակական ընթացիկ իրականութիւնը տպրելու պահանջը և երկրորդ, որ գլխաւորն է, բացատրվում է մեր ժողովրդի ոգիները կազմող աշխատաւոր դասակարգի քաղաքական զարգացման ցած աստիճանով, դասակարգի, որ ամբողջովին կլանված է ինքնապահպանութեան առօրեայ հոգսերով։

Այն ժամանակ, երբ ուրիշ քաղաքներում օրեցօր լույս էին ընկնում քաղաքական ինքնորոշ խմբեր՝ նախագծելու իրանց յետագայ ընթացքն ու վերաբերմունքը դէպի ներկայ պարլամենտական իրականարդը, մենք յետ մնալով այդ մակընթացութիւնից, առանց մէջ բերելու մեր մասնակցութեան չափը, գեռ զարմանում ենք, որ հասարակական ասպարէզը զարձել է սոսկ անհատական, որտեղ ամեն մարդ իր մանդատն ունի, և ուզում ենք կրկին ցանած տեղում ցորեն հնձել։ Եթէ մենք մասը մասի չենք խրել մինչև այսօր ժողովրդականացնելու ներկայ պետական-հասարակական ինդիրները համապատասխան լուսաւորութեամբ և խույս ենք տուել ընարող ժողովրդի քաղաքական ինքնագիտակցութիւնը բարձրացնելու անհրաժեշտ հոգսից, ուրեմն մի ուշացած բոցոք մեր կողմից կոչնում է երբեք չենք կարող ասել՝ թէ ինչու Կիրակոսի հետ ընարվել է անարժան Մարկոսը կամ Թաթոսը, մանաւանդ որ մի մասն էլ մեղանից ինքնաբերաբար ձեռնպահ է մնացել ընարողական գործից։ Ինչեմիցէ։ Հետևեալ օրը, մայիսի 3-ին, ընարութեան հետևանքից պարզվեց, որ մոտ 4700 ընարողներից մասնակցել են միայն 1900 հոգի, որ փաստորէն ապացուցանում է մեր անտարբերութիւնը ներկայ հարցի նկատմամբ, այն ինչ թեկնածուների թիւը անցնում է 70-ից, որ ցոյց է տալիս կրկին հասարակական կարծիքի անպատրաստ լինելը և թէ, առհասարակ, որպիսի խանգարանք ցանկութիւններ կան մեզ մոտ, երևակայութեան որպիսի խաբուսիկ պատկերներ մեր անտարբեր հորիզոնի վրա։ Ընտրական ձայներից մոտ 1650-ը ստացել է քաղաքագլուխ Գ. Տէր-Պետրոսեանը և մոտ 900 էլ քաղ. զումայի ձայնաւոր Ա. Խանդկանը. իսկ մնացած թեկնածուները 1-ից մինչև 300 ձայն։ Ընտրված լիազօրները՝—պպ. Գ. Տէր-Պետրոսեանը և Ա. Խանդկանը, ինչպէս յայտնի է, գիւղական 8 լիազօրների հետ (1-ը հոդատէր) պէտք է մասնակցեն մայիսի 16-ին Երևանում կայանալիք նահանգական ընտրողական ժողովին Պետական Դումայի երկու անդամներ ընտրելու համար։

Սարգ. Խանդկան

ԱՅՆՏԵՂ, ԵՒ ԱՅՍՏԵՂ

Արտասահմանեան թերթերից մէկում պատահմամբ կարդացինք մի այսպիսի՝ մեր կեանքին ու հասկացողութիւններին չտալանց տարօրինակ՝ դէպք, որ տեղի է ունեցել եպիսկոպոս Իսկոնամա քաղաքում։ Այդտեղ հոգեհանդարտ մի մեծ հանդէս է կատարվել ռուս-եպիսկոպոսական պատերազմի զաղտում ընկած... ի՞նչ էք կարծում, գեներալների, բարձրաստիճան զօրապետերի՞, կամ դուցէ կարծում էք՝ օֆիցէրների կամ նոյն իսկ հասարակ զօրքի յիշատակին։ Բոլորովին ոչ. ոչ մէկը և ոչ միւսը։ Այդ մեծ ու փառաւոր հանդէսը կատարվել է պատերազմի զաղտում հալածեալների համար ընված ձիերի յիշատակին։

«Մի քանի ժամ շարունակ,—պատմում է Թերթի Թղթակիցը, ամեն կարգի զինուորական վարտեր խոնարհութեամբ անցնում էին այդ ասիթով շինված դամբարանի առջևից, որը շրջապատված էր եպիսկոպոսական քահանաներով։ Նրանք երգերով զովաբանում էին այն ազնիվ զինանների «քաջութիւնը, տոկունութիւնը և նիւթութիւնը, որոնք կուռ մէջ մեռան հայրենիքի համար։ Տեսարանը այնչափ սրբազարժ էր և յուզմունքը այնչափ մեծ, որ թէ մարդիկ և թէ կանայք այդ թափորի ժամանակ առատ արտասուքներ էին թափում»։

Եւ սա կատակ չէ, ընթերցող։ Այնքան երկար ժամանակ ջղվիճութեան մասուլի կողմից «վայրենի», «բարբարոս», «կռապաշտ», «տնխիզ» և այլն մի շարք վիրաւորական ածականներով յայտարարված եպիսկոպոսները քաղաքակրթութեան, մարդկային զութի և այլ շատ մեծ առաւելութիւնների օրինակներ ասուցին ոչ միայն ռուս բիւրոկրատային, այլ և քաղաքակրթված եւրոպական բուրժուազիային։ Միևիայն հէնց այդ վերջինս, ընված ձիերի յիշատակին կատարված հանդէսը, նայեցէք թէ որքան խորհրդածութիւնների նիւթ է տալիս ձեզ և որքիսի զառն եզրակացութիւնների էք դալիս յանգում։ Մեր «քաղաքակրթված» բիւրոկրատական աշխարհում մարդիկ շատ աւելի քիչ գին և արժէք ունեն, քան այնտեղ՝ «վայրենի» եպիսկոպոսում չորքոտանի անասունները։ Այստեղ հարենիքի ժողովրդի ազատութեան մարտիկները գնդակահարվում, բանտարկվում և կախաղան են բարձրացվում, իսկ այնտեղ... հայրենիքի համար ընված նոյն իսկ ձիերի յիշատակին էլ փառահեղ հանդէսներ են կատարվում։

Արդեօք շատով պիտի դայ վերջապէս այն օրը, երբ մեր ժողովուրդն էլ հնարաւորութիւն ունենայ ազատութեամբ յարգելու, չենք ասում իր ընված ձիերին, այլ գոնէ իր իսկական հերոսների յիշատակը։

Ա.

ՄԱՔԻԵՆԻԼ ԱՍՊԱՐԷԶԸ

I

Շուրջ թեմական զպրոցը խաղաղ չէ։ Ա. առաջորդի և Ներսէս վարդապետի անցեալ տարվա պայ, անսակա և փութիկոտ կարգադրութիւնը, որ կամկոր նպատակ միայն ունէր՝ Ն. վ-ին անպատճառ տեսուչ տեսնել, ոչ մի դրական օգուտ չը տալով հանդերձ զպրոցի առաջադիմութեան՝ զարգացրեց աշակերտների մէջ անտազօնիզմի շարժում դէպի «դինաստիան»։

Աշակերտներին երկու ամիս շարունակ՝ ապրիլ և մայիս դասից զրկելը և զպրոցն անժամանակ արձակելը Ներսէս վարդապետի կամայականութեամբ՝ աւելի քան դատապարտելի է։ Զանազան շրջաններին և համագումարի հովերին նա իրաւունք չունէր զոհ դարձնելու երկու ամսվայ պարապմունքը։ Նա իրաւունք չունէր մտնել զպրոցը և դասարան-դասարան արձակել աշակերտներին առանց մանկավարժական ժողովի որոշման և ուսուցիչների հարցապնդած ժամանակ ասել թէ դա ձեր գործը չէ, այլ վարչութեան...։ Դրա դէմ բողոքում է հասարակութիւնը։

Ապրիլի 25-ին ուսումնական տարվայ ակտն էր։ Տեսուչը ներկայ չէր գտնվեց։ Աշակերտները քանիցս մարդ ուղարկեցին և պահանջեցին նրա ներկայութիւնը, բայց նա չեկաւ։ Եւ ակտը կատարվեց առանց տեսչի։ Ասում են որ աշակերտների գայրոյթը մինչև այն կէտն էր հասել, որ հանդէսի մէջ նրա թիւց պէտք է բռնէին և դուրս անէին, դուրս... մինչև քաղաքի գռները։

Նոյն օրն աշակերտները ներկայացրին ներսէս վարդապետին հետևեալ «պահանջը»։

«Լսելով քաղաքում տարածված այն շշուկները, որ իբր թէ զպրոցի աշակերտութիւնը մեխիքն հակառակ է դրկեականութեան, որ իբր թէ նա ձեր դէմ ոչինչ չունի և եթէ երբեմն դժգոհութիւններ յայտնել է, գրանք ուսուցիչների աշակերտութեան մէջ արած պրոպագանդայի արդիւնք են, որ իբր թէ աշակերտութիւնը գործում է դրսի հովերի ազդեցութեան տակ, որ իբր թէ աշակերտական շարժումները ընդհանուրի մտքի արդիւնք չեն, այլ անհատների, ուստի յայտնում ենք ձեզ, որ այս բոլորը բացարձակ զրպարտութիւններ են և արդիւնք ձեր և ձեր համախոհների մտքի։ Մենք սկզբունքով հոգեոր տեսուչ չենք ընդունում, ուր մնաց թէ դուք բացառութիւն կը կազմէիք և մանաւանդ որ դուք արժանի չէք տեսչական կոչման և անհոգ էք եղել դէպի ձեր ստանձնած գործերը, որը կարելի է հատատել փայլուն և պերճախօս փաստերով. ուստի մենք Շուշայ թեմական աշակերտութիւնս պահանջում ենք, որ մես տարվանից հրաժարվէք ձեր պաշտօնից»։

Այդ պահանջին հետևում են և մի շարք պահանջներ զպրոցի բարեփոխութեան մասին։ Դրանք ներկայացնում են ինը կէտեր և գրեթէ նոյնն են, ինչ որ մի երկու ամիս առաջ (տես «Մշակ» № 55,) մի քանի փոփոխութիւններով։ Օրինակ՝ հոգաբարձական և ուսուցչական կազմի ընարութեան մէջ աշակերտների մասնակցութիւնը, սոցիալական և գիշերանոցական դասեր մտցնելը և զպրոցի ծրագիրը միջնակարգ զպրոցների ծրագրին ամեն կերպ մօտեցնելը համալսարան մտնելու հնարաւորութեամբ և այլն։

Ուրեմն, երբ այս պահանջները կրկնվում են, ինչ անձնապատասխան հեռագիր էր «Մշակի» 52 համարում տպածը Շուշայ՝ Աշոտ եպիսկոպոսի տարաղրութեամբ, թէ «...մենք չը հեռանցինք միւս զպրոցների օրինակին և աշակերտների անտեղ ու անիմաստ պահանջներին բաւարարութիւն տուինք»։ Արդեօք բաւարարութիւն ստացող աշակերտը նոյն անբաւական հոգով կը կրկնէ՞ իր պահանջները...։

Եչմիածնի համագումարի դէմ ուսուցչական խմբի բօյկոտ յայտարարելու պատճառով Աշոտ եպիսկոպոսը կորեց ուսուցիչների տարեկան ռոճիկի 1/9 մասը։ Տեսնում էք ինչպէս պատժել գիտէ բիւրօկրատ վարդապետութիւնը ըմբոստներին։ Սա էլ ոգու զաղափարի դատնութեան պտուղներ։ Ի՞նչ լաւ էլ ասում են թէ միայն Ռուսաստանի բիւրօկրատները պատժել գիտեն իրանց չենթականերին...։

Ի՞նչպէս կը վերաբերվի արդիօք Ներսէս վարդապետը աշակերտական պահանջին, խոհեմութիւն կունենայ իջնելու տեղական ամբիոնից և մասնացոյց անելու նրան իրանից արժանաւորագոյն աշխարհականին, թէ՞ իր երախտաւորների ջանքերով կը յամառի անպատճառ մնալ լակ կապրիզի համար, զպրոցը և աշակերտութիւնը պատժելու համար, իրան չը սիրած մի քանի տասնեակ աշակերտներին և ուսուցիչներին զպրոցից վռնդելու համար և հարկաւ զպրոցը քարուքանդ անելու, անկման ճգնաժամին հասցնելու համար, միայն թէ ինքը և իր միապետութիւնը կանգուն մնան,—այդ չը գիտենք։ Հեռանալը պատուաբեր մարդու գործ է, իսկ ճակատի զօրով մնալը... երևի դրա հետևանքն էլ շուտով կը տեսնենք։

Սակայն... ինչ էլ որ լինի, տեսուչը պէտք է հեռանայ, իր յետադէմ, հնապաշտ վարժապետներով, գիւղերից հաւաքած տգիտներով։ Նա պէտք է հեռանայ և Շուշայ. նրա մնալը թունաւոր է։

Դպրոցում անպայման աշխարհական տեսուչ պէտք է լինի։

Նա խումբ պէտք է կազմէ, արժանաւոր խումբ—բաղկացած բարձրագոյն կրթութեան տէր, հմուտ և բարեխիղճ անձերից։

Դպրոցի հոգաբարձութիւնը՝ հեռու պէտք է լինի խնամական կապերից և նեղ անձնական հաշիւներից, բարձր ու վսեմ դասելով դպրոցի շահը, քան որն է բարեկամին հաց տալը։

Դպրոցը արտատանապէս պէտք է զովի հնապաշտական գաղափարներից և կանգնի առաջադիմական սկզբունքների վրա։

Դպրոցը դաւելու, ժողովրդի մէջ առաջադիմական գաղափարներով գործելու համար՝ բաւական չէ ունենալ լուսամիտ ուսուցչական և հոգաբարձական խումբ, այլ և նոյն հոգւով թեմական առաջնորդ, որ բարձր զեկավարողն է իր թեմի բոլոր կրթական և վիճակային գործերի։ Ինչքան էլ առաջնորդը հակվող լինի դէպի իր սառորդիր մարմինների լաւագոյն մտքերն ու գաղափարները, եթէ նա հնապաշտ է, յետադէմ է, խաւարամիտ է, դարձեալ կարմիր թելի նման կանցնեն նրա մտքերն ու գաղափարները լաւագոյն գործօնների ասածները, կը չլսանեն ու կը խափանեն նրա ազատ պտոյտը, կը կաղի գործը և դարձեալ հանդիսատես կը լինենք հնութեան պատկերների։ Իսկ համակերպվել նորագոյն գաղափարներին դա բաւական չէ. պէտք է առաջնորդը ունենայ նաև որոշ կրթական ցնոր և ոչ թէ զուրկ լինի հասարակ տարրական կրթութիւնից, երկդասեան զպրոցի գիտութիւնից անգամ։

Ունենալով ընտիր առաջնորդ՝ պէտք է ձեռք բերել նրան ընարողական միջոցով—որ նա լինի ժողովրդի ընտրածը, սիրածը, պաշտածը, որ նա լինի ուսման, զարգացման, կրթութեան տէր, որ նա ունենայ գործելու, դասելու, առաջ տանելու սէր, եռանդ, ընդունակութիւն, որ նա լինի ամեն բարեմասնութիւններով օժտված, առաջադիմական գաղափարների անկեղծ և վեհ զգացմունքների կրապետ։

Ե՞րբ պէտք է վերջապէս էջմիածինը հնչէ իր ձայնը, բանայ արգելքը և առաջարկէ ժողովրդին ընտրել իր առաջնորդը։ Ժողովրդի ընտրեալը—այսօր կոչում է ամբողջ Ռուսաստանը։ Իսկ մենք, որ պարծենում ենք թէ մեր եկեղեցին ունի ընտրողական ամենալայն սկզբունք և ընտրութեամբ են նրա բոլոր պաշտօնեաները, գեռ քնած ենք շատ հիմնական ու կարևոր գործերում։

Մի՞թէ դա պլոժենիայի հակառակ կը լինի։ Նա չէ արգելում ոչ ընտրելը և ոչ չընտրելը, այլ հստատում է կաթուղիկոսից առաջարկած երկու թեկնածուներից մէկը։ Ինչու՞ այդ թեկնածուներին ժողովուրդը չը տայ կաթուղիկոսի ձեռքը և չտենայ իր ընտրեալ առաջնորդը։ Ո՞ւրբան դատն փոքրոր կան, որքան դէպքեր, որ նշանակում առաջնորդներին ժողովուրդը միշտ խորթ է ճանաչել և ըստ մեծի մասին բողոքով, հարայ-հրոցով և ատելանքով։ Ինչպէս ասում ենք ինչ ինչ ազգ

ցելու էին եկել Ֆինլանդիայի և Լիհսատանի պատգամաւորները, որոնց դիմաւորեցին ոստաւալի ծափահարութիւններով։

ՀՌՈՎՄ, 5 մայիսի։ Մինիստր Նախագահ Մոնտեսոն յայտնեց պատգամաւորների պալատում, որ կարիքները հրաժարական տուեց, բայց թագաւորը չընդունեց այդ վճիռը։ Պալատը յետաձգեց նիստը անորոշ ժամանակով։

ԼՈՆԴՈՆ, 5 մայիսի։ Թագաւորը Բուկինգեմի պալատում ընդունեց դերմանական քաղաքների ներկայացուցիչներին, թոթովեց իւրաքանչիւրի աջը և ողորմածաբար խօսեց նրանց հետ։

ՄՈՍԿՎԱ, 5 մայիսի։ Առաջիկայ մայիսի 21-ին Մոսկվայում կայանալիք համառուսական ազնուականութեան հաւաքումը որոշված է նշանակել Պետերբուրգում։ Մոսկվայի սահմանադիր-ռամկավարների կուսակցութեան կենտրոնական բիւրոն կազմակերպում է ագիտացիայի համար մասնաժողով ազգաբնակութեան մէջ ագիտացիա անելու համար, բարեգործական մասնաժողով, հրատարակչական—խմբագրական մասնաժողով, բանալ հանրամատչելի քաղաքական ակումբ դեմօկրատական սկզբունքներով։ Մոսկվայի քաղաքապետը ենթարկել է ադմինիստրատիվ կալանաւորութեան բաւականաչափ մարդիկ գործադուլը դրդելու և աշխատանքը դադարեցնելու համար։

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱ

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 4 մայիսի։ Բօդիչէվ (Տվերի նահ.).—Ես մեծ յափշտակութեամբ լսեցի իմ նախորդ ճառախօսի գեղեցիկ խօսքերը, միանգամայն հասկանում եմ այն հոգեկան ձգտումը, որ թելադրում էր նրան սիրոյ վսեմ խօսքեր արտասանել միմիայն քաղաքական կալանաւորների համար։ Սակայն այդ հոգեկան ձգտումի հետ ես համաձայնվել չեմ կարող։ Եթէ այստեղ լինէր ամբիոն քարոզիչների համար, եկեղեցական ամբիոն, այն ժամանակ այդ մեր նոր լսած ճառը հասկանալի կը լինէր, բայց մենք օրէնսդիրներ ենք և, լինելով ամենօրեայ վկաներ այս կամ այն կողմից կատարվող սպանութիւնների, մենք մեզ պէտք է հարց տանք, հարկաւոր է, արդեօք որպէսզի մենք բարոյական դատապարտութեան խօսքը արտասանենք, պարտաւոր ենք։ Մեր գործն է միայն մատնացոյց անել թէ ինչու այդ տեսակ երեւոյթներ հնարաւոր են դառնում։ Այստեղ բացարձակ կերպով խօսում էին յանցանքների մասին։ Արդարև, մեր շուրջը տեղի էին ունենում բազմաթիւ պատիժներ։ Պատիժները կային, բայց դատաստան՝ ոչ, և մարդկանց պատժում էին առանց դատելու։ Այժմ հրաւիրում են մեզ պախարակիչ դատապարտութեան խօսք ուղղել նոյնպէս և այն սպանութիւնների առիթով, որոնք կատարվում են հակառակ կողմից։ Հարկաւոր է, արդեօք, հետեւել այդ առաջարկութիւնը։ Եթէ մենք այդ բանը անելու լինենք, պէտք է ասնք մեզ և հետեւեալ հարցը՝ արդեօք չէն հրաւիրվել նոյնպէս որ մենք վաղը պախարակենք օրինակ պետական գանձարանը կողոպտելու համար։ Շատ բաներ կան, որ հարկաւոր է դատապարտեան ենթարկել, բայց այստեղ դա անտեղի է, ընդհակառակը շատ տեղի կը լինի դատապարտել այն պետական կարգը, որի ժամանակ մարդկանց մահվան պատիժ են տալիս առանց դատարանի։ Եթէ այն ըէժիմի ներկայացուցիչները, որոնց դէմ մեզ առաջարկ է կատարվում էինյանցանքները, հաւատային իրանց արդար լինելուն, այնժամանակ նրանք յանցաւորներին կը յանձնէին երդուեալների դատարանին։ Եթէ միայն լինէր երդուեալների դատարան երդուեալների խստապահանջ է և նա ծանր պատժի կենթարկէ նրան, ով իր կարծիքով յանցաւոր է ներկայանում։ Այն օրը, երբ դուք կիմանաք, որ, այլևս սպանութիւններ չը կան, որոնք, երբ գաղտնի մնային, կը գայ միայն այն ժամանակ, երբ մենք կիմանանք, որ այլևս չը կան յանցանքներ և որոնք չեն մնալ առանց մերկացման. իսկ այժմ, ինչ ենք մենք տեսնում այժմ։ Մենք ամենայն օր կարդում ենք այնպիսի յանցանքների մասին, որոնք կատարում են ամենաբարձր ատիճանի վրա կանգնած պաշտօնեաները։ Եւ նրանցից, արդեօք ամենքն են պատասխանատուութեան ենթարկվում։ Ո՛չ, բոլորի աչքում խայտառակված անձինք իրանց ձեռքի մէջ էին պահում իշխանութեան զեկը։ Օրլովի պատգամաւորը ամենից լաւ է հասկանում թէ ում մասին եմ ես խօսում։

Մենք, պարոնայք, միջնորդներ չենք Թագաւորի և ժողովրդի միջև, մենք ժողովրդի ներկայացուցիչներ ենք Թագաւորի առաջ։ Մենք պատասխանատու կը լինենք, եթէ կրկնվի այն, ինչի մասին որ ասաց Օրլովի պատգամաւորը։ Մենք պէտք է բանանք մեր աչքերը և ասենք ճշմարիտը։ Ինչ տեսակ էլ որ ծանր լինի այդ ճշմարտութիւնը, բայց և այնպէս մենք պարտաւոր ենք նրան ամբողջապէս մերկացնել։ Ռուսաստանը անցրեց այն, ինչ որ չի անցրել Բաստիի ժամանակներից, և դրան վերջ պէտք է դրվի։ Ներկայացուցչական իշխանութիւն ժողովրդի հետ միասին, սերտ ջանքերով պէտք է ձգտի երկրում արդարութիւն հաստատել և վերջ դնել սպանութիւններին։ Այն ժամանակ, ներկայումս բանտերում տառապվողները կը տան ձեզ մի շարք անձնուրաց գործիչներ, որովհետև նրանց, այնտեղ՝ բանտ է տարել իրանց անձնուրացութիւնը (ծափահարութիւններ)։ Ներկայումս իշխանութեան ժամի անձանց շարքում մենք տեսնում ենք անձնուրաց շատ քչերին։ Նրանց ձայնը երբեք չէ հնչել և չէ հնչում այժմ էլ իշխանաբար. այդ ձայնը խեղդվել է այն մարդկանց իժային փշրոցից, որոնք քուութեամբ խոնարհվելով, միշտ շշնջացել են Ցարի ականջին, և այդ շշնջոցի հետևանքն էր այն, որ նա ծածկեց համայն երկիրը արիւնով իբրև հին կախարդ, որը թուչելով երկրի վրայով մահ է սփռում և կոծանվում է անմեղ ինչ ամենուրեք, ուր ծորում է նրա քրտինքը արիւնի կաթիլներով, և այդ կաթիլներից իւրաքանչիւրը դառնում է հիւանդութիւն, գարշանք և ժանտախտ։ Ժողովուրդը ձեռքերը բաց դէպի Ցարը ընդառաջ դուրս եկաւ։ Երկար, շատ երկար է մեր մէջ թագաւորել կամայականութիւնը։ Մեզ պէտք են մեծ կռիւ և ջանքեր, որպէս զի ջնջենք մեր սրտից այն դառնութիւնը, որը տարիներից ժողովվել է մեր սրտում։ Բարձրագոյն իշխանութիւնը կարող է այժմ իր ձեռքն առնել Պատմութեան բախտը և ռուս ժողովրդի հետ միասին ձեռնարկել Ռուսաստանի վերածնութեան գործին։ Միայն այն ժամանակ կը տիրէ խաղաղութեան իսկական յաղթանակը։ Բոլորովին ուրիշ կերպ են վերաբերվում նրանք, որոնք պէտք է պատրաստականութիւն յայտնէին, աշխատէին Ռուսաստանի օգտին։ Ահա թէ ինչ տեսակ պայմաններ են հարկաւոր, որ մենք մեր գործունէութեամբ և միահամուռ աշխատանքով իրաւունք, արդարութիւն և ազատութիւն հաստատենք։ Մենք մեր բոլոր ոյժերը գործ կը դնենք այդ գործի համար, բայց և մեր ոյժերը գործ կը դնենք նաև կուլիս մինչ այժմ յաղթանակող բռնութեան դէմ. ուրիշ մի բան ասել մենք չենք կարող։ Ահա թէ ինչու ես կարծում եմ, որ այժմ ժամանակ չէ բարոյական դատապարտութեամբ զբաղվել։ Մեր գործն է մատնացոյց անել ներկայիս քաղաքական պայմանների վրա։ Մեր ուղերձում արդէն յիշված են այդ ցուցմունքները։ Այդ ցուցմունքներով մենք վերջնում ենք մեզանից մեր շուրջը կատարվող յանցանքների պատասխանատուութիւնը։ Այն ըսվէից, երբ մեր յայտարարութիւնը կը ներկայացնվի Բարձրագոյն իշխանութեան, մենք արիւնի, արցունքների և յանցանքների համար արդէն մեղաւոր չենք լինի, և թող Բարձրագոյն իշխանութիւնը վճռէ, շարունակել արդեօք հին բռնութիւնը, որ տանում է դէպի կատաղի կռիւ՝ արդարութեան թագաւորութիւն մտցնելու համար։ Միայն այդ թագաւորութեան համար մենք կը կռնենք, այդ թագաւորութեան համար միայն մենք կը երդվենք։ (բուռն ծափահարութիւններ)։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 5 մայիսի։ Պետական Խորհրդի նիստում, մայիսի 4-ին, կոմս Վիտտէն արտասանեց հետեւեալ ճառը. «Ես միանդամայն համակարծիք եմ այն մտքին, որ արտայայտված է 18 հոգուց բաղկացած յանձնաժողովի կազմած ուղերձի նախագծի մէջ. բոլորովին համաձայն եմ այն մտքի հետ, որ Պետական Խորհուրդը պէտք է մի լինի և անկեղծ յարաբերութիւններ ունենայ Պետական Դումայի հետ։ Իմ ամենախորին համոզմունքով, միայն այդ պայմանով հնարաւոր են այն բէֆորմները, որոնց ծարաւի է ռուս ժողովուրդը։ Կարծում եմ, որ գործնականապէս ոչ ոքի մէջ կարծում եմ, որ այդպէս կարծիք արտայայտող ճառախօսը, խառնում է հետևանքը պատճառի հետ. այն աւելութիւնը, որ բերեց մեր փառաւոր, բայց թշուառ երկիրը այն դրութեան, որի մէջ այժմ գտնվում է, աւելի խոր արմատներ ունի։ Դումայի առաջին հանդիպումից յետոյ, որ արտայայտեց այդ կարծիքը, խօսեց հետևեալը, որը, թիւրիմացութեամբ, իբրև առաջնի մտքի հաստատութիւն, ասաց ի նպաստ անիծեալի հետևեալը. «Ես հաստատում եմ, որ անիծեալն ներկայ ըսպէում քաղաքական անհրաժեշտութիւն է հանդիսանում. հինգշաբթի ես տեսայ այնքան ազամանդներ և շռայլութիւն, մի մտացէք, որ այդ ամենը գնված է ժողովրդի դրամներով, բոլոր այդ քարերը վերցրված են իմ սուված եղբայրներից, այդ ամենը նրանց գոյքն է։ Սարսափեցէք այն ըսպէից, երբ մասսան կը հասկանայ իր իրաւունքները. վախեցէք ներքուից եկող սոսկալի հատուցումից։—Դատելով այդ խօսքերից, աւելութիւնը ծագել է ոչ թէ այս կամ այն վարչական գործողութիւններից, այլ աւելի խոր պատճառներից։ Եթէ զեկավարվենք այդ կարծիքով, անդորրութեան համար հարկաւոր է ոչ թէ ընդհանուր ամնիստիա, այլ կարողութիւնների հաւասարեցումն, պէտք է ոչնչացնել գոյքային բոլոր անհաւասարութիւնները, ինչ որ համազօր է անձնաւորութեան ոչնչացման։ Դա նշանակում է ռուս ժողովուրդը դարձնել ոչխարների հօտ, դա նշանակում է սարսափեցնել ամբողջ քաղաքակիրթ աշխարհը։ Ահա ինչի մէջ է ասելութիւնը։ Դիմելով համաշխարհային պատմութեան, մենք տեսնում ենք, որ ամենահին ժամանակներից եղել են ամնիստիաներ, շատ թագաւորներ ամնիստիա են տուել և մեր թագաւորն ևս առնառաձեռնօրէն տուել է, բայց պատմութիւնը չունի շատ օրինակներ, երբ ամնիստիան ինքն ըստ ինքեան կարողանար ոչնչացնել ատելութիւնը։ Ընդհակառակը, պատմութիւնը կարող է ցոյց տալ աւելի շատ օրինակներ, երբ ամնիստիան չէ արտադրում այն հետևանքները, որ սպասվում էին։ Իսկ երբեմն հակառակ արդիւնք է արտադրում։ Այդ առիթով, սովորաբար ասում են, թէ նա ուշացաւ, որ եթէ նրան տային երկու-երեք օր առաջ, նա կը բերէր անդորրութիւն. կամ ասում են, թէ նրա մէջ ասած չէ այդ, բայց այդ միևնոյն է, եթէ ես ասէի կուրից ընկած մարդին, որ կտրել է վիզը, թէ նա այնպիսի քայլ չէ արել, ինչպէս պէտք էր կամ գնացել է ոչ այս ժամանակին։ Ես կարծում եմ, որ անդորրութիւնը կը տիրէ, եթէ կը վերացվի ատելութիւնը։ Եթէ կերևայ օտարի դէմքը, անձնաւորութիւնը, գիտութիւնը, կուլտուրան և օրէնքը յարգելու գիտակցութիւնը։ Բոլոր նրանք, որոնք ցանկանում են ջնջել ատելութիւնը, պէտք է սեփական օրինակով ապացուցանեն իրանց արդար, անկեղծ և ազնիւ վերաբերմունքը դէպի բոլոր շրջապատող երևոյթները. ամենից առաջ նրանք իրանք արդար պէտք է լինեն, բայց մինչև որ լինի կուսակցական տակտիկա, արդարութիւնը հաստատվել չէ կարող։ Ես մեանում են ամնիստիայի մասին, բայց միայն պետական սիւների սահմաններում, բայց միայն այնպիսի ամնիստիայի, որ չը տանէ դէպի նոր յեղափոխութիւն։ Եթէ պէտք է ներվին միայն յանցանքներ, այդ ժամանակ ամնիստիան չէ կարող ընդհանուր լինել։ Այդ տեսակէտից ես համակրում եմ ամնիստիային, ես համակրում եմ ներումն շնորհելուն այն մոլորեալներին, որոնք յանցանք են կատարել երիտասարդութեան, խաբէութեան, մտաւոր զարգացման պակասութեան և այն միջավայրի շնորհիւ, որի մէջ նրանք գտնվել են, մանաւանդ ես ասում եմ մեր ռուս երիտասարդութեան մասին։ Ես համակրում եմ այն անձանց ամնիստիային, որոնք վնասել են անհամեմատ իրանց յանցանքի, գուցէ և միանգամայն անմեղ կերպով։ Ղեկի պարտականութիւնից զրկված ես պէտք է ասեմ, որ երբ տեղի է ունենում յեղափոխական ընդհարումները, երբ ամբոխը վրիժառու է լինում և ուզում են խախտել սեպականութեան իրաւունքը ու տապալել պետութեան կազմը, այն ժամանակ նրանց և այն մարդկանց մէջ, որոնք կոչված են պաշտպանելու ազատութիւնը և իրաւունքները, տեղի են ունենում ծայրահեղութիւններ և մանաւանդ, որ առնասարակ յատկանիշ է մարդկանց, գործողութիւններ եռանդի ընազդից դրդված։ Ահա նրանք, որոնք այդպիսի պատճառների ներքին տուժել ու վնասվել են, արժանի են ընդհանուր նեղումի։ Բայց մեր անկեղծ սէրը արտայայտելով դատարանի և իշխանութեան կողմից վնասվածներին, մանաւանդ այդպիսի դէպքերում, երբ իշխանութեան գործակալների կողմից եղել է միայն հրադրմունք, յանցանք գործած կը լինէինք եթէ փակէինք մեր սիրոյ անմեղ կերպով տանջվողների համար—և մեր պարքն է ձեռք չառնել այդպիսի միջոցներ, որոնք կարող էին նորից տանջանք պատճառել խաղաղ մարդկայ։ Այդ պատճառով ես ընդունում եմ անդամների մեծամասնութեան ընդունած ծրագրի միտքը, բայց գտնում եմ, որ խմբագրական մասը պահանջում է խոշոր փոփոխութիւններ։ Հարկաւոր է, որ մատնացոյց արված լինեն այն անձինք, որոնք կատարել են յանցանքները մոլորութեան, խաբէութեան և երիտասարդութեան շնորհիւ, այն անձինք, որոնք տուժել, վնասվել են անհամապատասխան իրանց յանցանքի, այնպիսի խառնաշփոթութեան ժամանակ, որը տեղի ունեցավ մի քանի ամիս շարունակ։ սկսած հոկտեմբերից մինչև փետրվար ամիսը, իսկ ինչ խառնաշփոթութիւն էր դա. ամենազօրեղ յեղափոխութիւն։ Բայց ես դէմ կը լինեմ այն բոլոր մէջոցներին, որոնք կարող են ստեղծել նոր յեղափոխութիւն։ Բանալով մեր սրտերը մի քանի ամսուայ անձանց համար, որոնք առատորեն են վնասվել։ Ես համաձայն եմ այդպիսի ամիսիա, որի ժամանակ պահպանվէր այն թէկուզ արտաքին կարգապահութիւնը, որը սացվել է այնքան մեծ դժուարութեամբ։ Այդ պատճառով, ես կարծում եմ, որ ուղերձի ծրագրի մէջ կան թերութիւններ։ Պետական Խորհուրդը պէտք է ասէ, որ նա իր սեպուհ պարտականութիւնը կը համարի խաղաղեցնել Ռուսաստանում կարգ պահպանելու համար գործադրվող բոլոր միջոցները։ Եթէ կարգապահութիւն չի լինի, ոչ մի բարեփոխութիւններ, ոչ մի կուլտուրա անկարելի են։ Մենք կը քաջալերենք, ամբողջ Ռուսաստանը կը մասնվի սարսափելի փորձութիւնների և կը կորցնէ քաղաքակիրթ երկիրների յարգանքը, որովհետև ամեն մի քաղաքակիրթ տերութիւն հասկանում է, որ առանց կարգապահութեան անհնարին են որևէ կատարելագործութիւն և բարեփոխութիւններ։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ԲԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Գուկիա, Զօրանցօվի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութիւն, վեներական (սիֆիլիս) և մանուռեռ. հ.
Կ. Մ. ՋԻԿՕՎԱՆԻ—9½—10 ժ. աչքի. ներքին և նեարդային։
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներական և վիրաբուժութիւն։
Զ. Ի. ԲԱՐԱՆԱՍԵՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.
Ի. Կ. ԳԶԵԼԻԵՎ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի
Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆՑ—1—1½ ժ. ներքին և նեարդային։
ԳԻՆ-ԲԺԻՇԿ Ա. Ի. ՇԶՆՐԲԻՆԱ—1½-2 ժ. մանկատարաբուժական և կանանց հ.
Գ. Ց. ԳՈՒՐԳԻՆՕՎ—1—2 ժ. կանանց հ. և մանկաբարձութիւն։

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Ա. Ա. ԱՐԵԱՆՑ—5—6 ժ. ներքին հիւանդ.
Ա. Մ. ՓՈՒՐԻՆՕՎ—6—7 ժ. ներքին և երեխայոց և ծաղկախտ։

Վճարը 50 կ. չքաւորները ձրի։ Հոմեոսրբդի (կոնդիկումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
բժշկապետ Բ. Նաւասարդեան

ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

ԲԺԻՇԿՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
ժղտական մասնաճակատներով։
Ելիզավետինսկայա փողոց, 101, տելեֆոն 1026
Հիւանդների ընդունելութիւն ամեն օր։
Մ. Գ. ԱՂԱՋԱՆԵԱՆՑ 1—2 ժ.—միզասեռական, կաշուի և սիֆիլիս։
Ի. Ն. ԵՂԻԱԶԱՐԵԱՆՑ 11—12 ժ.—ջղային, ներքին և էլեկտրո-բուժութիւն։
Գ. Ն. ԴԷՄԻԴՕՎ—11—12 կ. կանանց հ. և մանկաբարձութիւն։
Ի. Ե. ԱՒԵՏԻՍԵԱՆՑ 12—1 ժ. կանանց հ. և մանկաբարձութիւն։
Գ. Հ. ԹԱԴԷՈՍԵԱՆ 12—1 ժ. ներքին և երեխայոց հ.
Մ. Գ. ԿԻՄՕՆՑ. 1—2 ժ. վիրաբուժական հ.
Մ. Մ. ԷԼՊԻՆԵԱՆ 1—2 ժ. քթի, կոկորդի և ականջի։
Գ. Ա. ԲԷՑԷՐ—երեխայոց և ներքին հ.

Հիւանդանոցում բժշկում են հիպնօզով, կատարվում միկրոսկոպիական, բակտերիոլոգիական և քիմիական հետազօտութիւններ, նոյնպէս և ծաղկահատութիւն և անատոմների (кормилица) ընտրութիւն։ Բժշկական խորհրդի համար վճարը 50 կոպ։ Օպերացիայի և համախորհրդի վճարը ըստ համաձայնութեան։ Գիշերօթիկ հիւանդների բաժանմունքը բաղկացած է ընդհանուր սենեակներից և առանձին նոմէրներից։

(չ.ռ.կ.) 53—100

ԲԺԻՇԿ

Լեւոն Օհանջանեան

Մասնագէտ միզային, վեներական, սիֆիլիսի և կաշուի հիւանդութիւնների։ Ընդունում է առաւօտեան 9-ից մինչև 11 ժամը, երեկոյեան 6—9 ժամ.։ Կանանց և երեխաների համար 11—12 ժ.։ Հասցէն անկիւն Գօլօվինսկի պրոսպեկտի և Կազանսկայա փողոցի, տուն Թամամշեանի։ Մուտքը Կազանսկի փողոցից № 2.

(ա. օ.) 142—300

ԲԺԻՇԿ Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆ

Ընդունում է մասնաւորապէս սիֆիլիս, միզային, վեներական և մորթու ախտ ունեցող հիւանդներին ամենայն օր, առաւ. 12—2 ժ. և 6—8 երեկ. Սօլօլակ, անկիւն Բեբուտովսկի և Պասկեվիչ փող. № 33/15 տ. Միրիմանեանի (նախկին օրիորդաց 3-դ գիմնազ. տուն)։

(ա. օ.) 84—100

ԲԺՇԿԱՊԵՏ

Մ. Գ. ՋԱԽԱՐԻԳԵԱՆ

Ներքին եւ նեարվային հիւանդութիւնների
Ընդունում է առաւօտեան ժամի 10—12-ը և երեկոյեան ժամը 6—7։ Լերմօնտովսկայա փողոց, տուն № 16։

(ա. օ.) 18—50

ԱՏԱՄՆԵՐ

արհեստական, մաքրել, պլոմբ ածել, բժշկել և այլն։ Գր. Մատ. Իսխլէդ. Միխայլով, 90. գերմանական եկեղեցու դիմաց։ Երկաթուղային ծառայողներին, ուսանողներին և չքաւորներին զիջումով։ (կ.չ.ու.) 7—15

ԲԺԻՇԿ

Գ. Ն. ՄԱՂԱՔԵԱՆ

Մասնագէտ ներքին և երեխայոց հիւանդութիւններին։ Ընդունելութիւնը ամեն օր 12—1 ժ. առա. և 5—6 երեկ.
Միխայլովսկի պր. տ. Ճավճանիձէի № 36.

(կ.չ.ու.) 10—50

ՀՐԱՒԷՐ

Որովհետև թեմիս սրբազան առաջնորդի առաջադրութեան համաձայն Տափի թաղի (Բամոյեան) եկեղեցու անցեալ ապրիլի ամսոյ 23-ի ծխական ժողովի ընտրութիւնը համարվում է անվաւեր և նշանակված է նոր ընտրութիւն, ուստի յիշեալ եկեղեցու յարգելի ծխականները ամսոյս 7-ին, կիրակի օրը, ժամը 12-ին հրաւիրվում են ս. Նշան եկեղեցու ուսումարանը, ընտրելու պատգամաւոր և երկու անձնավոխանորդ՝ Ներսիսեան հոգևոր դպրոցի համար հոգաբարձուներ ընտրող խորհրդին մասնակցելու։

Սա լինելով արդէն երրորդ ընտրական ժողով, ծխականների ինչ թիւ էլ որ ներկայ լինի, ժողովը կը համարվի օրինական։

Տափի-թաղի եկեղեցու՝ Յովհաննէս աւագ քահ. Մարտիրոսեան

(շ. կ.) 2—2

ՀՐԱՒԷՐ

Ամսոյս 7-ին կիրակի օրը, ժամը 12-ին Վանքի եկեղեցու ծխականները երկրորդ և վերջին անգամ հրաւիրվում են ժողովի իրանց միջից մի ներկայացուցիչ ընտրելու, որ միաս եկեղեցիների հետ ընտրեն չորս պատգամաւոր հայ-թուրքական խաղաղարար ժողովին մասնակցելու, որ կայանալու է զինուորական նահանգապետի մօտ։

Ղ. աւ. քահ. Խարազանց

(շ. կ.) 2—2

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Կուկիայի Նորաշէն ս. Աստուածածին եկեղեցու ծխականները սրանով հրաւիրվում են, կիրակի, մայիսի 7-ին, ցերեկվայ 12½ ժամին ծխական ընդհանուր ժողովի՝ կատարելու երկու պատգամաւորի և երկու փոխանորդի ընտրութիւն, որոնք պէտք է ապա մասնակցեն Ներսիսեան դպրոցի համար հոգաբարձութիւն ընտրելու խորհրդին։ Ապրիլի 23-ի ընտրութիւնը սրբազան առաջնորդի կարգադրութեամբ բեկանված է։

Աւագ-երէց Ալէքսանդր Ք. Տէր-Յովհաննէսեան

(շ. կ.) 2—2

Կիրակի, մայիսի 7-ին, ցերեկվայ 12 ժամին
ՄՈՂՆՈՒ Ս. ԳԷՈՐԳ ԵԿԵՂԵՑՈՒ

ծխականները հրաւիրվում են ներկայ գալնվելու անցեալ ապրիլի 23-ին կայացած ծխական ընդհանուր ժողովի շարունակութեանը։

Քննվելու են հետևեալ հարցերը.

1) Զեկուցումն ծխական հոգաբարձութեան գործերի դրութեան մասին։
2) Նախահաշիւ դպրոցի և եկեղեցու 1906 թ. և հաշիւ եկեղեցու 1904/5 թ.։
3) Ծխական տուրքի սահմանումն։
4) Գայլանեան դպրոցի շինութեան հարցը։
5) Երէցփոխի զեկուցումը Յովհաննան դպրոցի հոգաբարձական ընտրութեան մասին։

Նախագահ ծխական ժողովի՝
Ստ. Լիսիցեան

(ու. կ.) 2—2

ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՐՏԷԶ

Ս. Վ. Արզութեան-Երկայնաբազուկի։ Զեռնարկ մայրերի և դաստիարակչուհիների համար. 77 երգ շարժական խաղերով. 112 օրինակներ աշխատանքի համար.—գինն է 3 ր. 10%—յատկացրված է հայ արվեստներների օգտին։ Դիմել Թիֆլիս, Սօլօլակ, Պասկեվիչի փողոց, № 13։

(հ. կ. ե.) 8—28

ԹԻՖԼԻՍԻ ԱՄԱՌԱՅԻՆ ԺՈՂՈՎԱՐԱՆՈՒՄ

Կիրակի, մայիսի 7-ին
Յօգուտ էժանագին և ձրի հաշարանների
կը կայանայ

ԶԲՕՍԱՆՔ
ՎԻՃԱԿԱԽԱՂՈՎ

Մանկական խաղերը սկսվում են ցերեկվայ ժամը 4-ին
Պարերը երեկոյեան ժամը 6-ին, պ. Իսնօչենցի դեկավարութեամբ։
Մուտքը արժէ 25 կ. 10 տարեկանից փոքրերի համար 10 կ. վիճակախաղի տոմսակները 20 կոպ.։
Զբօսանքի սկիզբն է ժամը 3-ին
Եղանակի անյաջողութեան դէպքում զբօսանքը է յետաձգվում երկուշաբթի մայիսի 8-ին։

(շ.կ.) 2—2

Գանձակի նախկին
„ՑԵՆՏՐԱԼ“

հիւրանոցը վերջին հայ-թուրքական ընդհարումների պատճառով ՏԵՂԱՓՈԽՎԵԼ է իր բոլոր փառաւոր կահ-կարասիքով Թիֆլիս, Պուշկինսկայա փողոց, նոյն
„ՑԵՆՏՐԱԼ“

մակագրութեամբ. հիւրանոցի տէրը հրաւիրում է յաճախորդների ուշադրութիւնը՝ սաստիկ զարգացած մաքուր սենեակներ իր բոլոր յարմարութիւններով. սենեակների գնները 80 կոպէկից մինչև 2 ռուբլի։

Ալէքսանդր Յարութիւնեանց

(կ.հ.) 2—100

Ամենահասատ միջոց Սօլիտերի դէմ (տափակ ճիճու), որով յընթացս քսան և ութ տարվայ բժշկվել են աւելի քան տասը հազար մարդ ամեն դասակարգից։ Ցանկացողները պէտք է դիմեն պատրաստողին՝ հետևեալ հասցէով՝ Թիֆլիս, Գօնչարովի փողոց, № 23, Մարտիրոս Հախնազարեանցին։ Գինն է Թիֆլիսում 4 ռուբլի, Թիֆլիսից դուրս, ճանապարհածախսով, 5 ռուբլի, որ ստանալուն պէս իսկոյն ուղարկվում է։ Վերադիր վճարով ոչ ոքի չի ուղարկվի։

հ. կ. 2—3

Երկար տարիներ ժողովրդական դպրոցներում ծառայած Մի փորձված ՈՒՍՈՒՑԻՉ դասեր է որոնում։ Կարող է վարել գործակատարի, մասնաւոր քարտուղարի, կառավարչի պաշտօն։ Ցանձն է առնում սրբագրութիւն կատարել։ Հասցէն. Абасъ-Абадская пл., 3-ій Могнинскій тупикъ, д. № 3, верхній этажъ. 1—3

Շուշի գաւառի Շուշիքենդ գիւղի հասարակութիւնն իր խորին շնորհակալութիւնն է յայտնում պ. Աւագ Ս. Թորոսեանին, որը նոյն գիւղի աղքատներից վնասվածներին նուիրեց երեք հարիւր ռուբլի (300 ռ.)։

Շուշիքենդի գիւղացիներ՝ Աւագ-բէկ Թարխանեանց, Առաքել Խաչատրեանց, Իսակ Թումասեանց, Տէր-Թոմաս Տէր-Գրիգորեանց, Մելքայէլ-բէկ Թարխանեանց, Սողոմոն Միրզաջանեան, Միրզա Թորոսեան, Աւագ Խաչատրեան, Ալէքսան Փարամազեան, Խաչատուր Հայրապետեան։

(կ.) 1—1

ՀԱՒԼԱԲԱՐԻ ԹԱՏՐՕՆ

Կիրակի, մայիսի 7-ին
Թիֆլիսի Ժողովարանի հայ թատերասէրների խումբը մասնակցութեամբ դերասանուհի տ. ՄԱՅՍՈՒՐԵԱՆԻ և տ. Զարէլի
կը ներկայացնէ
ՎԵՐԱՓՆՆԻՉ

Կօմ. 5 գործ. հեղինակութիւն Գօգօլի Թարգմ. Տէր-Աստուածատրեանի
Մասնակցում են տ. ՄԱՅՍՈՒՐԵԱՆ, Զարէլ, Աւանեան, պ.պ. Վանշիր, Տէր-Գրիգորեան, Շերլենեան, Սարեան, Գալստեան, Սաֆարեան, Խիրանեան, Դուչչեան, Եգիկեան, Ապրեսեան, Բէժանեան, Մարտիրոսեան, Սահակեան, և ուրիշները։
Սկիզբը ուղիղ 8 ժամին
Տեղերի գինն է 80-ից մինչև 10 կ. լօժա 2 ր. Խաղամիջոցներին կը նուագէ զինուորական երաժշտական խումբը։
Տոմսակները վաճառվում են միմիայն թատրօնի կասայում։
Հերթ. կարգադրիչ Շահվերդեան
Ռեժիսսիօր տ. Մայսուրեան
Շուտով լինելու է տ. Մայսուրեանի բենէֆիսը։

(շ.կ.) 1—2

Թիֆլիսի Առեւտրական Նաւթարդիւնաբերական Ընկերութեան Վարչութիւնը

սրանով հրաւիրում է պ.պ. բաժնէտերերին տարեկան ընդհանուր ժողովին, որը կը կայանայ յունիսի 4-ին ներկայ 1906 թ., առաւօտեան 10 ժամին, Թիֆլիսում, Երևանեան հրապարակ, Խարազեանի տանը։

ՊԱՐԱԳՄՈՒՆԵՔՆԵՐԻ ԱՌԱՐԿԱՆԵՐՆ ԵՆ

1) Անցեալ 1905 թ. հաշի և քալանսի քննութիւնը և հաստատութիւնը։
2) Ծախսերի նախահաշիւ և ներկայ 1906 թ. գործողութիւնների յատակագծի քննութիւնը քննիչ յանձնաժողովի եզրակացութեամբ։
3) Վարչութեան մէկ դիրեկտօրի և նրա կանդիդատի ընտրութիւնը վիճակով դուրս եկածների փոխարէն, համաձայն ընկերութեան կանոնադրութեան § 28։
4) Քննիչ յանձնաժողովի հինգ անդամների ընտրութիւնը, համաձայն ընկերութեան կանոնադրութեան § 44։
5) Վարչութեան զեկուցումը ընկերութեան գործերի ընդհանուր դրութեան մասին։
6) Նախկին Թիֆլիսի առևտրական նաւթարդիւնաբերական ընկերակցութեան մի քանի բաժնէտերերի յայտարարութիւնների և խնդիրքների քննութիւնը։

Եթէ ընդհանուր ժողովը չը կայանայ սահմանեալ ձայների թիւ չը լինելու պատճառով, այն ժամանակ 2-րդը նշանակվում է նոյնպէս այնտեղ 1906 թ. յունիսի 18-ին, առաւօտեան 10 ժամին, որը օրինականապէս կայացրված կը համարվի, ձայների թիւը որքան էլ լինի։

(կ.ե.չ.) 1—3

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՈՒՄ ՏՊԱԳՐՎԱԾ 98 ԳՈՅՆՈՎ
„ՈԳԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ“

Պատկերները, որը միևնոյն ժամանակ կարող է ծառայել, որպէս օրինակ կանուայի վրա ասեղնագործելու։
Գինն է 5 ռուբլի ճանապարհածախսով։
Դիմել՝ Тифлисъ, Вельяминовская № 24, Вардану Варданяну. 8—10

Թիֆլիսի Փոխադարձ Վարկի Ընկերութիւնը

Ներկայ մայիսի 5-ից

Վ Ճ Ա Ր Ո Ւ Մ Ք	
Հասարակ ընթացիկ հաշուով	3½%
Պայմանական » »	4%
Պահեստագրամներով ցպահանջ	3½%
6 ամսով	4%
1 տարով	5½%
Վ Ե Ր Ց Ն Ո Ւ Մ Ք	
Առևտրական մուրհակների զեղչի համար մինչև 6 ամիս	8%